ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԱՅՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԼՈՒՐՋ
ԵՐԱՇՏԻ ԵՎ / ԿԱՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ,
ՀԱՏԿԱՊԵՍ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՏԵՔՍՏԸ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԱՅՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԼՈՒՐՋ ԵՐԱՇՏԻ ԵՎ / ԿԱՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ, ՀԱՏԿԱՊԵՍ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Միացյալ Ազգերի Կազմակերպության Անապատացման դեմ պայքարի Կոնվենցիայի Ժամանակավոր քարտուղարության և Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի Ծրագրի կոնվենցիաների մասին տեղեկատվության բաժնի հրատարակություն:
Թարգմանություն ռուսերենից:
Երևան 2000թ.: 95 էջ:

Գրքույկում տրվում է Միացյալ Ազգերի Կազմակերպության Անապատացման դեմ պայքարի Կոնվենցիայի տեքստը հավելվածներով:

Թարգմանությունը ռուսերենից ՆԱԶԻԿ ԽԱՆՋՅԱՆԻ
Պատասխանատու խմբագ ՍԱՄՎԵԼ ԲԱԼՈՅԱՆ

Հրատարակությունը իրականացված է ……կողմից:

ISBN ……..

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Մուտք

Մաս I. Ներածություն

Մաս II. Ընդհանուր դրույթներ

Մաս III. Գործողությունների ծրագրեր, գիտական և տեխնիկական համագործակցություն և օժանդակություն ցուցաբերելու միջոցներ

Բաժին 1.Գործողությունների ծրագրեր

Բաժին 2. Գիտական և տեխնիկական համագործակցություն

Բաժին 3. Օժանդակություն ցուցաբերելու միջոցներ

Մաս IV. Հաստատություններ

Մաս V. Արարողակարգեր

Մաս VI. Եզրափակիչ դրույթներ

Հավելված I. Հավելված՝ Աֆրիկայի համար տարածաշրջանային մակարդակով Կոնվենցիայի իրականացման մասին

Հավելված II. Հավելված՝ Ասիայի համար տարածաշրջանային մակարդակով Կոնվենցիայի իրականացման մասին

Հավելված III. Հավելված՝ Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի համար տարածաշրջանային մակարդակով Կոնվենցիայի իրականացման մասին

Հավելված IV. Հավելված՝ Հյուսիսային Միջերկրածովի համար տարածաշրջանային մակարդակով Կոնվենցիայի իրականացման մասին

Հավելված V. Հավելված՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի համար տարածաշրջանային մակարդակով Կոնվենցիայի իրականացման մասին

Նախաբան

Միջազգային հանրությունը արդեն վաղուց ընդունել է այն փաստը, որ անապատացումը, աշխարհի բոլոր տարածաշրջանների շատ երկրների համար, իրենից ներկայացնում է տնտեսական, սոցիալական և էկոլոգիական մեծ հիմնախնդիր: 1977թ. Միացյալ Ազգերի Կազմակերպության Կոնֆերանսը, անապատացման դեմ պայքարի ուղղությամբ ընդունեց անապատացման դեմ պայքարի գործողությունների Պլան: Դժբախտաբար, չնայած այդ և այլ ջանքերի, Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի Ծրագիրը (ՇԾժկ) 1991թ. եկավ այն եզրակացության, որ հողերի դեգրադացիայի հիմնախնդիրը չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններում սրվել է, թեև ձեռք են բերվել "առանձին հաջողություններ":

Այդ պատճառով անապատացման դեմ պայքարի ուղիների մասին հարցը գտնվում էր Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի և զարգացման Կոնֆերանսի (ՇԾհժԺ) ուշադրության կենտրոնում, որը տեղի ունեցավ 1992թ. Ռիո Դե Ժանեյրոյում: Կոնֆերանսը արտահայտվեց ի օգուտ այդ հիմնախնդրի լուծման նոր համալիր մոտեցմանը՝ ընդգծելով տեղական համայնքների մակարդակով, կայուն զարգացմանը աջակցություն ցույց տալու նպատակով միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտությունը: Կոնֆերանսը կոչով դիմեց նաև Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեային՝ հիմնադրել բանակցություններ վարող Միջկառավարական կոմիտե (ԾԽԹկ), որպեսզի մինչև 1994թ. հունիսը մշակվի անապատացման դեմ պայքարի Կոնվենցիան այն երկրներում, որոնք ենթարկվում են լուրջ երաշտի և/կամ անապատացման, հատկապես Աֆրիկայում: 1992թ. դեկտեմբերին Գլխավոր Ասամբլեան համաձայնվեց այդ առաջարկության հետ՝ ընդունելով 47/188 բանաձևը:

Աշխատելով լարված ժամանակացույցով՝ Կոմիտեն ավարտեց բանակցությունները հինգ նստաշրջանների ընթացքում: Կոնվենցիան ընդունվեց Փարիզում 1994թ. հունիսի 17-ին և բացվեց ստորագրման համար 1994թ. հոկտեմբերի 14-15-ը: Ավելի քան 100 երկրներ արդեն ստորագրել են Կոնվենցիան, և այն ուժի մեջ է մտել հինսուներորդ օրը՝ հիսուն երկրների կողմից վավերացնելուց հետո՝ 1997թ.: Այդ ընթացքում, Դրա դրույթներից շատերը, հատկապես այն, որոնք վերաբերվում են Աֆրիկայում գործողությունների ծրագրերին, իրականացվում էին Կոմիտեի կողմից ընդունված բանաձևերի հիման վրա:

Ներկա Կոնվենցիայի Կողմերը,

հաստատելով, որ վնասված կամ սպառնալիքի տակ գտնվող շրջանների մարդկանց հատկացվում է կենտրոնական ուշադրություն՝ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործունեության շրջանակներում,

արտահայտելով միջազգային հանրության, այդ թվում պետությունների և միջազգային կազմակերպությունների, լուրջ մտահոգությունը անապատացման և երաշտի անբարենպաստ հետևանքների առիթով,

գիտակցելով, որ չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններին ընդհանուր առմամբ բաժին է ընկնում Երկրի ցամաքային մակերեսի նշանակալից մասը, և դրանք հանդիսանում են բնակչության զգալի մասի բնակության միջավայրը և գոյության միջոցների աղբյուրը,

ընդունելով, որ անապատացումը և երաշտը հանդիսանում են գլոբալ մասշտաբներ ունեցող հիմնախնդիրներ, քանի որ նրանք վնասում են աշխարհի բոլոր տարածաշրջանները, ինչպես նաև անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման համար անհրաժեշտ են միջազգային հանրության համատեղ գործողություններ,

նշելով, որ զարգացող երկրների նշանակալից մասը, հատկապես առավել քիչ զարգացած երկրները երկրների միջև, որոնք ենթարկվում են ուժեղ երաշտի և/կամ անապատացման և հատկապես այդ երևույթների ողբերգական հետևանքները Աֆրիկայում,

նշելով նաև, որ անապատացումը առաջանում է ֆիզիկական, կենսաբանական, քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների բարդ փոխազդեցությամբ,

հաշվի առնելով առևտրի և միջազգային տնտեսական հարաբերությունների այլ ասպեկտների ազդեցությունը վնասվող երկրների կարողությունների վրա՝ հարկ եղած ձևով տանել պայքար անապատացման դեմ,

գիտակցելով, որ կայուն տնտեսական աճը, սոցիալական զարգացումը և չքավորության արմատական վերացումը հանդիսանում են առաջնահերթ խնդիրներ վնասվող զարգացող երկրներում, հատկապես Աֆրիկայում, և կայուն զարգացման նպատակներին հասնելու անհրաժեշտ պայմանները,

հաշվի առնելով, որ անապատացումը և երաշտը անբարենպաստ ազդեցություն են թողնում կայուն զարգացման վրա՝ կապված այնպիսի կարևոր սոցիալական հիմնախնդիրների հետ դրանց փոխկապակցությամբ, ինչպիսիք են չքավորությունը, վատ առողջապահությունը և սնունդը, պարենային անվտանգության բացակայությունը և այն հիմնախնդիրների հետ, որոնք ծագում են կապված միգրացիայի, մարդկանց տեղափոխությունների և ժողովրդագրության գործոնների փոփոխության դինամիկայի հետ,

բարձր գնահատելով անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման բնագավառում պետությունների և միջազգային կազմակերպությունների անցյալում ձեռնարկված ջանքերը և փորձը, մասնավորապես Միացյալ Ազգերի Կազմակերպության անապատացման դեմ կիրառվող գործողությունների Պլանի իրականացման ժամանակ, որն ընդունվել էր Միացյալ Ազգերի Կազմակերպության անապատացման դեմ պայքարի Կոնֆերանսի կողմից 1977թ.,

գիտակցելով, որ, չնայած անցյալում ձեռնարկված ջանքերի, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործում առաջընթացը չարդարացրեց սպասելիքները և պահանջվում է բոլոր մակարդակներով նոր ու ավելի արդյունավետ մոտեցում կայուն զարգացման նպատակներին հասնելու շրջանակներում,

ընդունելով Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի և զարգացման Կոնֆերանսի կողմից ընդունված որոշումների գործնականությունը և արդիականությունը, մասնավորապես XXI դարի Օրակարգի և դրա 12-րդ գլխի, որտեղ նախատեսվում է անապատացման դեմ պայքարի գործունեության համար հիմքը,

կրկին հաստատելով այդ կապակցությամբ զարգացած երկրների պարտավորությունները՝ ընդգրկված XXI դարի Օրակարգի 33-րդ գլխի 13-րդ կետում,

վկայակոչելով Գլխավոր Ասամբլեայի 47/188 բանաձևը, մասնավորապես դրանում Աֆրիկային տրվող առաջնահերթ նշանակությունը և անապատացման ու երաշտի բնագավառում Միացյալ Ազգերի Կազմակերպության մյուս բոլոր համապատասխան բանաձևերը, որոշումները և ծրագրերը, ինչպես նաև աֆրիկական երկրների և այլ տարածաշրջանների երկրների համապատասխան դիմումները,

կրկին հաստատելով Ռիո դե Ժանեյրոյի շրջակա միջավայրի և զարգացման հռչակագիրը, որի 2-րդ սկզբունքում նախատեսվում է, որ երկրները Միացյալ Ազգերի Կազմակերպության կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն ունեն անկախ իրավունք իրենց սեփական ռեսուրսները յուրացնել շրջակա միջավայրի և զարգացման ոլորտում սեփական քաղաքականության համապատասխան և պարտականություն՝ ապահովել, որպեսզի իրենց իրավասության կամ հսկողության շրջանակներում վնաս չհասցնեն ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող շրջաններում այլ պետությունների շրջակա միջավայրին,

ընդունելով, որ ազգային կառավարությունները որոշիչ դեր են խաղում անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքները մեղմացնելու գործում և, որ առաջընթացն այդ ոլորտում կախված է տեղերում գործողությունների ծրագրի իրականացումից վնասվող շրջաններում,

ընդունելով նաև միջազգային համագործակցության և ընկերակցության նշանակությունն ու անհրաժեշտությունը անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործում,

ընդունելով այնուհետև վնասվող զարգացող երկրներին, հատկապես Աֆրիկայում, արդյունավետ միջոցների և, մասնավորապես, էական ֆինանսական ռեսուրսների տրամադրման նշանակությունը՝ ներառյալ նոր և լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների ապահովումը և տեխնոլոգիաներին թույլատվության հատկացման նշանակությունը, առանց որոնց նրանց դժվար կլինի լիարժեք կատարել իրենց պարտականությունները Կոնվենցիայի ուղղությամբ,

արտահայտելով մտահոգություն ՝ կապված անապատացման և երաշտի ազդեցության հետ, որ այդ երևույթներով վնասվում են Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի երկրները,

ընդգծելով կարևոր դերը, որ խաղում են կանայք անապատացումից և/կամ երաշտից տուժած տարածաշրջաններում, հատկապես զարգացող երկրների գյուղական շրջաններում և, բոլոր մակարդակներով, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ծրագրերում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց լրիվ մասնակցության ապահովման կարևորությունը,

ընդգծելով ոչ կառավարական կազմակերպությունների և այլ խոշոր խմբերի հատուկ դերը անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ծրագրերում,

հաշվի առնելով փոխադարձ կապը անապատացման և գլոբալ մասշտաբի այլ էկոլոգիական հիմնախնդիրների միջև, որոնց հետ բախվում են միջազգային և ազգային հանրությունները,

հաշվի առնելով նաև այն ներդրումը, որը կարող է կատարել անապատացման դեմ պայքարը Միացյալ Ազգերի Կազմակերպության կլիմայի փոփոխության Շրջանակային Կոնվենցիայի, կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանության այլ կոնվենցիաների նպատակներին հասնելու համար,

նկատի ունենալով, որ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ռազմավարությունները կլինեն առավել արդյունավետ, եթե դրանք հիմնված լինեն հարկ եղած կանոնավոր դիտումների և ճշգրիտ գիտական գիտելիքների վրա և, եթե տարվի դրանց մշտական վերագնահատումը,

ընդունելով միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման և համակարգման բարելավման կենսական պահանջը ՝ ազգային ծրագրերի և գերակայությունների իրականացմանը աջակցելու նպատակով,

լինելով վճռականությամբ համակված ընդունելու համապատասխան միջոցներ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման համար ՝ ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից ,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՄԱՍ I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

a) “անապատացում” նշանակում է տարբեր գործոնների ազդեցության արդյունքում, ներառյալ կլիմայի փոփոխության և մարդու գործունեության, հողերի դեգրադացիան չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններում;

b) “պայքար անապատացման դեմ” իր մեջ ներառում է գործունեություն, որը հանդիսանում է չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններում կայուն զարգացման նպատակով հողային ռեսուրսների համալիր զարգացման մի մասը և որն ուղղված է.

i) հողերի դեգրադացիայի մասշտաբների կանխմանը և/կամ կրճատմանը;
ii) մասնակի դեգրադացված հողերի վերականգնմանը; և
iii) անապատացումից տուժած հողերի վերականգնմանը;

c) “երաշտ” նշանակում է բնական երևույթ, որն առաջանում է, երբ տեղումների քանակը զգալի ցածր է ամրագրված նորմալ մակարդակից, որն առաջացնում է հիդրոլոգիական հավասարակշռության լուրջ խախտումներ ՝ անբարենպաստ անդրադառնալով հողային ռեսուրսների արտադրողականության վրա;

d) “երաշտի հետևանքների մեղմացում” նշանակում է գործունեություն, կապված երաշտի կանխագուշակման հետ և ուղղված երաշտի հանդեպ հասարակության ու բնական համակարգերի խոցելիության պակասեցմանը , քանի որ դա մտնում է անապատացման դեմ պայքարի գործընթացի շրջանակների մեջ;

e) “երկիր” նշանակում է երկրային կենսաարտադրողական համակարգ, որն իր մեջ ընդգրկում է հողը, ջուրը, բուսականությունը, այլ կենսազանգվածը, ինչպես նաև համակարգի ներսում տեղի ունեցող էկոլոգիական և հիդրոլոգիական գործընթացները;

f) “հողի դեգրադացիա” նշանակում է չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններում անջրդի վարելահողերի, ոռոգելի վարելահողերի կամ արոտավայրերի, անտառների և անտառային տարածքների կենսաբանական ու տնտեսական արտադրողականության և բարդ կառուցվածքի նվազեցում կամ կորուստ հողօգտագործման կամ մեկ կամ մի քանի գործընթացների գործողությունների արդյունքում ՝ այդ թվում կապված մարդու գործունեության և տարաբնակեցման կառուցվածքների հետ, այնպիսիք ինչպիսիք են.

i) հողի, քամու և/կամ ջրային էրոզիան ;
ii) հողի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կամ տնտեսական հատկությունների վատացումը; և
iii) բնական բուսածածկի երկարաժամկետ կորուստը;

g) “չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններ” նշանակում է, բացի բևեռային և ենթաբևեռային շրջաններից, շրջաններ, որտեղ տեղումների ամենամյա միջին մակարդակի հարաբերությունը պոտենցիալ գոլորշիացմանը տատանվում է 0,05 մինչ 0,65 սահմաններում;

h) “վնասվող շրջաններ” նշանակում են չոր, կիսաչոր և/կամ չոր սուբհումիդ շրջաններ, որոնք ենթարկվում են անապատացման կամ գտնվում են անապատացման վտանգի տակ;

i) “վնասվող երկրներ” նշանակում են այն երկրները, որոնցում ցամաքի մակերեսը ամբողջությամբ կամ մասամբ ընդգրկում է վնասվող շրջանները;

j) “տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն” նշանակում է կազմակերպություն, հիմնադրված կոնկրետ տարածաշրջանի անկախ պետությունների կողմից, որի իրավասության մեջ մտնում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցեր, և որը հարկ եղած ձևով լիազորված է իր ներքին արարողակարգերին համապատասխան ստորագրել, վավերացնել, ընդունել, խրախուսել սույն Կոնվենցիան կամ միանալ դրան;

k) “զարգացած երկրներ - Կոնվենցիայի Կողմեր” նշանակում է տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություններ ՝ հիմնադրված զարգացած երկրների կողմից:

Հոդված 2

ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակն է հանդիսանում բոլոր մակարդակներում արդյունավետ միջոցների ընդունման ճանապարհով անապատացման դեմ պայքարը և երաշտի հետևանքների մեղմացումը այն երկրներում, որոնք ենթարկվում են լուրջ երաշտի և/կամ անապատացման, հատկապես Աֆրիկայում, համալիր մոտեցման շրջանակներում զուգակցելով միջազգային համագործակցության և ընկերակցության մասին համաձայնագրերի հետ, որը համապատասխանում է XXI դարի Օրակարգին և ուղղված է վնասվող շրջաններում կայուն զարգացմանը հասնելուն:

2. Այդ նպատակին հասնելու համար վնասվող շրջաններում անհրաժեշտ է երկարաժամկետ համալիր ռազմավարություն՝ միաժամանակ ուղղված հողի արտադրողականության բարձրացմանը, հողային և ջրային ռեսուրսների վերականգնմանը, պահպանությանը և կայուն օգտագործմանը հատկապես համայնքների մակարդակում կենսամակարդակի բարձրացման նպատակով:

Հոդված 3

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու և դրա դրույթները իրականացնելու համար Կողմերը ղեկավարվում են, մասնավորապես, հետևյալով.

a) Կողմերը ապահովում են, որպեսզի անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման ծրագրերի մշակման և իրականացման մասին որոշումները ընդունվեն բնակչության և տեղական համայնքների մասնակցությամբ և, որպեսզի, ավելի բարձր մակարդակներով ստեղծվեն ազգային և տեղական մակարդակներով գործունեությանը նպաստող բարենպաստ պայմաններ;

b) Կողմերը միջազգային համերաշխության և ընկերակցության ոգով կատարելագործում են համագործակցությունը և համակարգումը ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով և ավելի արդյունավետ կենտրոնացնում ֆինանսական,

մարդկային, կազմակերպչական և տեխնիկական ռեսուրսները այնտեղ, որտեղ դրանք անհրաժեշտ են;

c) Կողմերը ընկերակցության ոգով զարգացնում են համագործակցությունը կառավարման բոլոր մակարդակների, համայնքների, ոչ կառավարական կազմակերպությունների և հողատերերի միջև, այնպես, որպեսզի վնասվող շրջաններում հասնեն հողի բնույթի և արժեքի ու ջրային ռեսուրսների պակասորդի ավելի խորը ըմբռնմանը և դրանց կայուն օգտագործմանը; և

d) Կողմերը ամբողջությամբ հաշվի են առնում վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի և ,մասնավորապես, նրանցից ամենաքիչ զարգացածների հատուկ կարիքներն ու հանգամանքները:

ՄԱՍ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմերը կատարում են իրենց պարտավորությունները սույն Կոնվենցիայի ուղղությամբ՝ անհատական կամ համատեղ, կամ ապագա երկկողմ կամ բազմակողմ պայմանավորվածության գործող շրջանակներում, կամ դրանց զուգակցման շրջանակներում, կախված հանգամանքներից, հատուկ ուշադրություն դարձնելով ջանքերի համակարգման անհրաժեշտության և բոլոր մակարդակներով համաձայնեցված երկարաժամկետ ռազմավարության մշակման վրա:

2. Ձգտելով սույն Կոնվենցիայի նպատակին հասնելուն, Կողմերը.

   a) ընդունում են համալիր մոտեցում անապատացման և երաշտի գործընթացների ֆիզիկական , կենսաբանական և սոցիալ-տնտեսական ասպեկտների վերաբերյալ;

   b) դարձնում են պատշաճ ուշադրություն վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի վիճակին, միջազգային և տարածաշրջանային համապատասխան օրգանների շրջանակներում, որպեսզի, ինչ վերաբերվում է միջազգային առևտրին, մարկետինգի և պարտքերի մասին համաձայնագրերին, ստեղծվի բարենպաստ միջազգային տնտեսական մթնոլորտ, որը կնպաստի կայուն զարգացման նպատակներին հասնելուն;

   c) ինտեգրացնում են ռազմավարությունները՝ ուղղված չքավորության վերացմանը, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ջանքերին;

   d) աջակցում են վնասվող երկրների - Կոնվենցիայի Կողմերի միջև համագործակցությանը շրջակա միջավայրի և հողային ու ջրային ռեսուրսների պահպանության ոլորտներում, քանի որ դա նպաստում է անապատացման և երաշտի դեմ պայքարին;

e) ամրապնդում են ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը;

f) համագործակցում են համապատասխան միջկառավարական կազմակերպությունների հետ;

g) որոշում են հարկ եղած ձևով կազմակերպչական մեխանիզմները՝ ելնելով կրկնողություններից խուսափելու անհրաժեշտության հաշվարկից; և

h) օժանդակում են գոյություն ունեցող երկկողմ և բազմակողմ ֆինանսական մեխանիզմների և համաձայնագրերի օգտագործմանը, որոնք համախմբում և ուղղում են էական ֆինանսական ռեսուրսներ վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործընթացում:

3. Վնասվող զարգացող երկրները - Կոնվենցիայի Կողմերը Կոնվենցիայի իրականացման համար ունեն օգնության իրավունք:

Հոդված 5

ՎՆԱՍՎՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ - ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի լրացումն իրենց պարտավորությունների, 4-րդ հոդվածի համապատասխան, վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը պարտավորվում են.

a) հատկացնել առաջնահերթ ուշադրություն անապատացման դեմ պայքարին և երաշտի հետևանքների մեղմացմանը և առանձնացնել համարժեք ռեսուրսներ՝ իրենց սեփական իրավիճակին և հնարավորություններին համապատասխան;

b) մշակել ռազմավարություններ և հաստատել գերակայություններ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ՝ կայուն զարգացման ծրագրերի և ռազմավարությունների շրջանակներում;

c) քննարկել անապատացման հիմքում ընկած պատճառների վերացման հարցերը և հատուկ ուշադրության արժանացնել անապատացման գործընթացների զարգացմանը նպաստող սոցիալ-տնտեսական գործոններին;

d) օժանդակել տեղական բնակչության իրազեկության ապահովմանը և նրա մասնակցությանը հատկապես կանանց և երիտասարդների, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ջանքերի ուղղությամբ ոչ կառավարական կազմակերպություններին աջակցելու ընթացքում; և

e) ստեղծել բարենպաստ մթնոլորտ՝ համապատասխան օրենքների պատշաճ ուժեղացման միջոցով, իսկ այն դեպքերում, երբ դրանք բացակայում են, նոր օրենքների ստեղծման և երկարաժամկետ քաղաքականության ու գործողությունների ծրագրերի ձևավորման միջոցով:

Հոդված 6

ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ - ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի լրացումն 4-րդ հոդվածով իրենց ընդհանուր պարտավորությունների՝ զարգացած երկրները - Կոնվենցիայի Կողմերը պարտավորվում են.

a) անհատական կամ համատեղ, պայմանավորվածության համաձայն, ակտիվ աջակցել վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի ջանքերին, հատկապես աֆրիկական երկրներին և առավել քիչ զարգացած երկրներին՝ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքները մեղմացնելու ուղղությամբ;

b) ապահովել էական ֆինանսական ռեսուրսների և աջակցության այլ ձևերի տրամադրումը, վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին օգնություն ցույց տալու համար, հատկապես աֆրիկական երկրներին, արդյունավետ մշակել և իրականացնել իրենց սեփական երկարաժամկետ ծրագրերը և ռազմավարությունները ամապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ;

c) օժանդակել նոր և լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների համախմբմանը՝ հոդված 20-ի 2 բ) կետին համապատասխան;

d) խրախուսել մասնավոր սեկտորից և այլ ոչ կառավարական աղբյուրներից ֆինանսական միջոցների համախմբանը; և

e) օժանդակել և նպաստել վնասվող երկրների - Կոնվենցիայի Կողմերի, հատկապես վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի մուտքը համապատասխան տեխնոլոգիաներին, գիտելիքներին և նոու-հաու:

Հոդված 7

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԱՖՐԻԿԱՅԻՆ

Սույն Կոնվենցիայի իրականացման ժամանակ կողմերը առաջնահերթ ուշադրություն են հատկացնում վնասվող աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին՝ այն հատուկ իրավիճակի առումով, որ ստեղծված է այդ տարածաշրջանում, ընդ որում տեսադաշտից դուրս չթողնելով նաև մյուս տարածաշրջանների այլ վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին:

Հոդված 8

ԿԱՊԸ ԱՅԼ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՀԵՏ

1. Կողմերը խրախուսում են գործունեության համակարգումը, որն իրականացվում է սույն Կոնվենցիայի շրջանակներում և այլ համապատասխան միջազգային համաձայնագրերի, մասնավորապես Միացյալ Ազգերի Կազմակերպության Կլիմայի փոփոխության Շրջանակային Կոնվենցիայի և կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի շրջանակներում, եթե դրանք հանդիսանում են այդ Կոնվենցիաների Կողմեր՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր համաձայնագրի շրջանակներում իրականացվող գործողությունից ստանալ առավելագույն օգուտ՝ խուսափելով ջանքերի կրկնումից: Կողմերը խրախուսում են համատեղ ծրագրերի անցկացումը, հատկապես գիտական ուսումնասիրությունների, կադրերի պատրաստման, կանոնավոր դիտումների և տեղեկատվության փոխանակության ոլորտներում , այնքանով, որքանով այդպիսի

գործունեությունը կարող է նպաստել համապատասխան համաձայնագրերի նպատակներին հասնելուն:

2. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն ոտնահարում ցանկացած Կողմի իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են երկկողմ, տարածաշրջանային կամ գլոբալ համաձայնագրերից, որում նա ընդգրկվել է իր համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց առաջ:

ՄԱՍ III

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Բաժին 1.
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

Հոդված 9
ԲԱԶԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

1. Իրենց պարտավորությունների կատարման ընթացքում, ի կատարումն 5-րդ հոդվածի դրույթների, վնասվող զարգացող երկրները - Կոնվենցիայի Կողմերը, և ցանկացած այլ վնասվող Կողմ, իր հավելվածի շրջանակներում, տարածաշրջանային մակարդակով կամ այլ պայմաններում, որը գրավոր ձևով տեղեկացրել է մշտական Քարտուղարությանը ազգային գործողությունների ծրագիր պատրաստելու իր մտադրության մասին, պատշաճ կերպով մշակում են, հրապարակում են և իրականացնում գործողությունների ազգային ծրագրերը՝ հենվելով, որքանով դա հնարավոր է, գոյություն ունեցող և հաջող իրականացվող համապատասխան պլանների և ծրագրերի և գործողությունների ենթատարածաշրջանային և տարածաշրջանային ծրագրերի վրա, որոնք հանդիսանում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ռազմավարության կենտրոնական տարրը: Այդպիսի ծրագրերը նորացվում են բնակչության մասնակցության անընդհատ գործընթացի շրջանակներում՝ տեղերում իրականացման ընթացքում կուտակված փորձի և գիտական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: Գործողությունների ազգային ծրագրի նախապատրաստման գործընթացը սերտորեն կապվում են ազգային քաղաքականության ձևավորման այլ ջանքերի հետ՝ կայուն զարգացման նպատակով:

2. Զարգացած երկրների - Կոնվենցիայի Կողմերի կողմից օգնության տարբեր ձևերի տրամադրման ժամանակ, հոդված 6-ի դրույթներին համապատասխան, առաջնությունը

տրվում է, ինչպես դա համաձայնեցվել էր, վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի, հատկապես աֆրիկական երկրների ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային գործողությունների ծրագրերի օժանդակությանը, կամ անմիջականորեն, կամ համապատասխան բազմակողմ կազմակերպությունների միջոցով, կամ երկու ուղիներով միաժամանակ:

3. Կողմերը նպաստում են, որպեսզի Միացյալ Ազգերի Կազմակերպության համակարգի օրգանները, ֆոնդերն ու ծրագրերը և այլ համապատասխան միջազգային կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, գիտական շրջանակները և ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք ընդունակ են համագործակցելու, իրենց մանդատներին համապատասխան և իրենց հնարավորությունների չափով օժանդակություն ցույց տան գործողությունների ծրագրերի մշակմանը և իրականացմանը, և, դրանց հետ կապված, հաջորդող միջոցառումների անցկացմանը:

Հոդված 10

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1. Գործողությունների ազգային ծրագրերի նպատակը կայանում է նրանում, որպեսզի որոշվեն անապատացմանը նպաստող գործոնները և անապատացման դեմ պայքարի ու երաշտի հետևանքների մեղմացման համար անհրաժեշտ գործնական միջոցները:

2. Գործողությունների ազգային ծրագրերում վերապահվում են կառավարության, տեղական համայնքների և հողօգտագործողների համապատասխան դերերը և որոշվում են առկա և անհրաժեշտ ռեսուրսները: Դրանք, մասնավորապես.

   a) ներառում են իրենց մեջ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման երկարաժամկետ ռազմավարություններ, շեշտադրում են գործնական միջոցառումները և շաղկապվում են, կայուն զարգացման ոլորտում, ազգային քաղաքականության հետ.

   b) թույլատրում են փոփոխություններ մտցնել, հաշվի առնելով փոփոխվող հանգամանքները, և տեղական մակարդակում հանդիսանում են բավական ճկուն `

տարբեր սոցիալ-տնտեսական, կենսաբանական և երկրաֆիզիկական պայմաններում որոշումներ ընդունելու համար.

c) հատուկ ուշադրություն են դարձնում կանխարգելիչ միջոցների իրականացմանը այն հողերի նկատմամբ, որոնք դեռ դեգրադացիայի չեն ենթարկվել կամ ենթարկվել են դրան աննշան աստիճանի.

d) նախատեսում են կլիմայական, մետեորոլոգիական և հիդրոլոգիական ուսումնասիրությունների ազգային բազայի ամրապնդում և հնարավորությունների ընդարձակում՝ երաշտի վաղ նախազգուշացման համակարգի ստեղծման համար.և

e) նպաստում են քաղաքականության անցկացմանը և կազմակերպչական մեխանիզմների ամրապնդմանը՝ ուղղված դոնորների, բոլոր մակարդակներում կառավարական օրգանների, տեղական բնակչության և համայնքների շրջանակներում խմբերի միջև ընկերակցության ոգով համագործակցությանը և համակարգմանը և ձեռնարկում են միջոցներ համապատասխան տեղեկատվությունից և տեխնոլոգիաներից տեղական բնակչության օգտվելու հնարավորությունները թեթևացնելու համար;

f) նախատեսում են տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներում ոչ կառավարական կազմակերպությունների և տեղական բնակչության, ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, հատկապես ռեսուրս օգտագործողների՝ ընդգրկելով հողագործներին և անասնապահերին և նրանց ներկայացուցչական կազմակերպություններին, արդյունավետ մասնակցությունը քաղաքականության պլանավորման , որոշումներ ընդունելու, գործողությունների ազգային ծրագրերի իրականացման և վերլուծության գործում; և

g) պահանջում են կանոնավոր ամփոփում և կանոնավոր զեկույցների պատրաստում այդ աշխատանքի ընթացքի մասին:

3. Գործողությունների ազգային ծրագրերը կարող են, մասնավորապես, ընդգրկել մի քանի կամ հետևյալ բոլոր միջոցները երաշտի հետևանքները մեղմացնելու ուղղությամբ.

a) վաղ նախազգուշացման համակարգի ստեղծումը և/կամ ամրացումը, ելնելով հանգամանքներից, ընդգրկելով տեղական և ազգային միջոցները, ինչպես նաև ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներում համատեղ համակարգերը, էկոլոգիական նկատառումներով տեղափոխված մարդկանց օգնություն ցույց տալու մեխանիզմները;

b) երաշտին պատրաստ լինելու ներուժի ամրացումը և դրա հետևանքների վերացումը՝ ընդգրկելով երաշտի դեմ պայքարի արտակարգ ծրագրերը տեղական, ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներում, հաշվի առնելով ինչպես սեզոնային, այնպես էլ միջտարեկան կլիմայական կանխագուշակումները;

c) ստեղծումը և/կամ ամրացումը, ելնելով հանգամանքներից, պարենային անվտանգության համակարգերի՝ ընդգրկելով պահեստավորման և իրացման միջոցները, հատկապես գյուղական շրջաններում;

d) նախագծերի կազմում՝ գոյության միջոցների այլընտրանքային աղբյուրների ուղղությամբ, որոնք կարող են ապահովել եկամուտների ստացումը երաշտի ենթարկված շրջաններում;

e) կայուն ոռոգման ծրագրերի մշակում ինչպես հողագործության, այնպես էլ անասնապահության կարիքների համար:

4. Հաշվի առնելով յուրաքանչյուր վնասվող երկրի - Կոնվենցիայի Կողմի կոնկրետ պայմանները և պահանջները՝ ազգային գործողությունների ծրագրերը հարկ եղած կերպով ընդգրկում են, մասնավորապես, միջոցներ, մի քանի ստորև թվարկվող առաջնահերթ ոլորտներում կամ այդ բոլոր ոլորտներում այն չափով, որքանով դրանք վերաբերվում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացմանը այդ երևույթներով վնասվող շրջաններում և համապատասխանում են այդ շրջանների բնակչության հետաքրքրություններին; գոյության միջոցների այլընտրանքային աղբյուրների խրախուսում և ազգային տնտեսական իրավիճակի բարելավում, ծրագրերի ուժեղացման նպատակով՝ ուղղված չքավորության վերացմանը և պարենային անվտանգության ապահովմանը; դեմոգրաֆիկ զարգացման դինամիկա; բնական ռեսուրսների կայուն կառավարում; գյուղատնտեսության վարման կայուն մեթոդներ; էներգիայի տարբեր

աղբյուրների զարգացում և արդյունավետ օգտագործում; կառուցվածքային և իրավական շրջանակներ; գնահատման և մոնիտորինգի ոլորտում հնարավորությունների ամրացում՝ ընդգրկելով հիդրոլոգիական և օդերևութաբանական ծառայությունները; և հասարակության ներուժի, կրթության և տեղեկացվածության ավելացում :

Հոդված 11

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը խորհրդակցում և համագործակցում են միմյանց հետ նախապատրաստելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, համաձայն տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին համապատասխան հավելվածների, ենթատարածաշրջանային և/կամ տարածաշրջանային գործողությունների ծրագրեր՝ ազգային ծրագրերի համաձայնեցման, լրացման և արդյունավետության բարձրացման համար: Հոդված 10-ի դրույթները կիրառվում են mutatis mutandis մոտեցմամբ ենթատարածաշրջանային և տարածաշրջանային ծրագրերի նկատմամբ: Այդպիսի համագործակցությունը կարող է ընդգրկել անդրսահմանային բնական ռեսուրսների կայուն կառավարման համաձայնեցված համատեղ ծրագրեր, գիտական և տեխնիկական համագործակցություն և համապատասխան ինստիտուտների ամրացում:

Հոդված 12

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը, մյուս կողմերի և միջազգային հանրության հետ համատեղ, պետք է համագործակցեն, որպեսզի ապահովեն բարենպաստ միջազգային իրադրության ստեղծում՝ ներկա Կոնվենցիայի դրույթների, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին հավելվածների իրականացման ընթացքում: Այդպիսի համագործակցությունը պետք է ընդգրկի նաև այնպիսի ոլորտներ, ինչպես տեխնոլոգիաների փոխանցումը, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունները և մշակումները, տեղեկատվության հավաքն ու տարածումը և ֆինանսական ռեսուրսները:

Հոդված 13

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

1. Գործողությունների ծրագրերին օժանդակություն ցույց տալու միջոցները, 9-րդ հոդվածին համապատասխան, ընդգրկում են, մասնավորապես.

   a) ֆինանսական համագործակցություն՝ գործողությունների ծրագրերի կանխատեսանելիության ապահովման համար, որոնք նախատեսում են անհրաժեշտ երկարաժամկետ պլանավորում;

   b) համագործակցության մեխանիզմների մշակում և կիրառում, որոնք թույլ են տալիս ցուցաբերել տեղական մակարդակում ավելի արդյունավետ օժանդակություն, այդ թվում ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով, աջակցելու նպատակով, համապատասխան դեպքերում, գործունեության բարեհաջող փորձարարական ձևերի ծրագրերի ուղղությամբ փորձի տարածմանը;

   c) ճկունության ավելացում՝ նախագծերի մշակման, ֆինանսավորման և իրականացման ժամանակ, փորձնական տիպային մոտեցմանը համապատասխան՝ նախատեսված տեղական համայնքների մակարդակով բնակչության ներգրավմամբ գործունեության համար; և

   d) անհրաժեշտ վարչական և բյուջետային արարողակարգեր, որոնք թույլ կտան բարձրացնել համագործակցության և օժանդակման ծրագրերի արդյունավետությունը:

2. Վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին այդպիսի օժանդակություն ցուցաբերելիս առաջնությունը տրվում է աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին և առավել քիչ զարգացած երկրներին - Կոնվենցիայի Կողմերին:

Հոդված 14

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Պայմանավորված կողմերը գործողությունների ծրագրերը մշակելիս և իրականացնելիս սերտ համագործակցում են՝ անմիջական կամ համապատասխան միջկառավարական կազմակերպությունների միջոցով:

2. Կողմերը ստեղծում են գործող մեխանիզմներ, մասնավորապես ազգային մակարդակով և տեղերում՝ ապահովելու համար առավել լիարժեք համակարգումը զարգացած երկրների - Կոնվենցիայի Կողմերի, զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի և համապատասխան միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների միջև՝ կրկնություններից խուսափելու, գործողությունները և մոտեցումները համաձայնեցնելու և օգնության արդյունքը առավելագույնի հասցնելու համար: Վնասվող զարգացող երկրներում - Կոնվենցիայի Կողմերում առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի գործողությունների համակարգմանը՝ կապված միջազգային համագործակցության հետ՝ ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործման, արդյունավետ օգնության ապահովման և ազգային գործողությունների ծրագրերի և գերակայությունների բարեհաջող իրականացման համար:

Հոդված 15

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Բաղադրամասերը գործողությունների ծրագրերի մեջ ընդգրկելու համար ընտրվում և ճշտվում են հաշվի առնելով վնասվող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին կամ տարածաշրջանին բնորոշ սոցիալ- տնտեսական, աշխարհագրական և կլիմայական գործոնները, ելնելով նաև նրանց զարգացման մակարդակից:

Գործողությունների ծրագրերի նախապատրաստման ղեկավարման սկզբունքներն ու կոնկրետ ուղղվածությունը և ծրագրերի բովանդակությունը առանձին ենթատարածաշրջանների և տարածաշրջանների համար շարադրվում են տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին հավելվածներում:

Բաժին 2.

ԳԻՏԱ - ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 16

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔ ՈՒ ԱՆԱԼԻԶ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Հաշվի առնելով իրենց համապատասխան հնարավորությունները Կողմերը համաձայնվում են համալիր ձևով իրականացնել և համակարգել համապատասխան կարճաժամկետ և երկարաժամկետ տվյալների և տեղեկատվության հավաքն ու վերլուծությունը, ինչպես նաև դրանց փոխանակությունը՝ տուժած շրջանների հողերի դեգրադացիայի կանոնավոր դիտումների ապահովման և երաշտի ու անապատացման և դրանց հետևանքների գործընթացները ավելի խորը հասկանալու և վերլուծության ենթարկելու համար: Դրա շնորհիվ կապահովվի, մասնավորապես, անբարենպաստ կլիմայական փոփոխությունների ժամանակահատվածների վաղ նախազգուշացումը և այդ ժամանակահատվածների համար միջոցառումների նախօրոք պլանավորումը՝ պիտանի ձևով բոլոր մակարդակներում օգտագործողների, առաջին հերթին տեղական բնակչության կողմից,գործնական կիրառման համար: Այդ նպատակի համար նրանք հարկ եղած ձևով.

a) նպաստում և ամրացնում են գլոբալ ցանցի հիմնարկների և ծառայությունների գործունեությունը՝ տեղեկատվության հավաքի, տեղեկատվության փոխանակության ու դրա վերլուծության, ինչպես նաև բոլոր մակարդակներով կանոնավոր դիտումների համար, որոնք, մասնավորապես.

   i) ձգտում են կիրառել համադրելի ստանդարտներ և համակարգեր;
   ii) ընդգրկում են համապատասխան տվյալներ և կայաններ, այդ թվում առանձին շրջաններում;
   iii) կիրառում և տարածում են ժամանակակից տեխնոլոգիա՝ հողերի դեգրադացիայի մասին տվյալների հավաքի, փոխանցման և գնահատման համար; և

iv) հաստատում են ավելի սերտ կապեր տվյալների և տեղեկատվության մշակման ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կենտրոնների և տեղեկատվության գլոբալ աղբյուրների միջև;

b) ապահովում են, որպեսզի տեղեկատվության հավաքն ու վերլուծությունը և տեղեկատվության փոխանակությունը համապատասխանեն տեղական համայնքների և ղեկավար օրգանների պահանջներին՝ կոնկրետ հիմնախնդիրների որոշման նպատակով և, որպեսզի տեղական համայնքները մասնակցեն այդ գործունեությանը;

c) ապահովում են երկկողմ և բազմակողմ ծրագրերի և նախագծերի օժանդակությունը և հետագա զարգացումը՝ ուղղված տվյալների և տեղեկատվության որոշմանը, անցկացմանը, գնահատմանը և ֆինանսավորմանը և դրանց փոխանակությանը՝ ընդգրկելով, մասնավորապես, ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական ու տնտեսական համալիր ցուցանիշներ;

d) լիարժեք օգտագործում են հեղինակավոր միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հատուկ գիտելիքները, հատկապես տարբեր տարածաշրջաններում օգտագործողների խմբերի մեջ համապատասխան տեղեկատվության և փորձի տարածման համար;

e) պատշաճ ուշադրություն են դարձնում սոցիալ - տնտեսական տվյալների հավաքին և վերլուծությանը, այդպիսի տվյալների փոխանակմանը, ինչպես նաև դրանց շաղկապվածությանը ֆիզիկական և կենսաբանական տվյալների հետ;

f) իրականացնում են տեղեկատվության փոխանակություն և ապահովում են լրիվ, բաց և օպերատիվ հանրամատչելի բոլոր աղբյուրների տեղեկատվությունը, որը առնչություն ունի անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման հետ; և

g) հաշվի առնելով իր համապատասխան ազգային օրենսդրությունը և/կամ քաղաքականությունը՝ փոխանակվում են տեղեկատվությամբ այն գիտելիքների մասին, որոնց տնօրինում է տեղական բնակչությունը և սերնդից սերունդ փոխանցվող գիտելիքների մասին՝ ապահովելով դրանց պատշաճ պահպանությունը և միջոցներ կիրառելով այն բանի համար, որպեսզի համապատասխան տեղական բնակչությունը

կարողանա հարկ եղած ձևով, արդարացիության հիմքի վրա և փոխընդունելի պայմաններով, օգտվի այդ գիտելիքների շնորհիվ ձեռք բերված օգուտից:

Հոդված 17

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

1. Հաշվի առնելով իրենց համապատասխան հնարավորությունները ՝ Կողմերը պարտավորվում են խրախուսել գիտա - տեխնիկական համագործակցությունը անապատացման և երաշտի հետևանքների մեղմացման ոլորտներում ՝ համապատասխան ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային հաստատությունների միջոցով: Այդ նպատակներով նրանք օժանդակություն են ցույց տալիս հետազոտական գործունեությանը, որը.

a) նպաստում է անապատացմանը և երաշտին հանգեցնող գործընթացների մասին գիտելիքների ընդարձակմանը , ինչպես նաև, ինչպես բնական, այնպես էլ մարդածին բնույթի պատճառային գործոնների դերի մասին ՝ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ռեսուրսների արդյունավետ օգտագործման և դրանց կառավարման նպատակով;

b) ունի հատուկ որոշված նպատակներ, համապատասխանում է տեղական բնակչության կոնկրետ պահանջներին և հանգեցնում է գործնական որոշումների հայտնաբերմանն ու իրականացմանը որոշումների փորձի վրա ՝ նպաստելով տուժված շրջանների բնակչության կենսամակարդակի բարձրացմանը;

c) պահպանում, ամփոփում, խորացնում և հաստատում է ավանդական ու տեղական գիտելիքները, նոու-հաու և փորձը ՝ ապահովելով, որպեսզի ազգային օրենսդրությունը և/կամ քաղաքականությունը հաշվի առնելով, այդ գիտելիքներ կրողները ստանան անմիջական օգուտ, արդարացիության հիմքի վրա, և փոխընդունելի պայմաններով, դրանց ցանկացած ձևի առևտրական օգտագործումից կամ ցանկացած տեխնիկական նվաճումից, որը հնարավոր է դարձել իրենց շնորհիվ;

d) զարգացնում և ամրապնդում է վնասվող զարգացող երկրներում - Կոնվենցիայի Կողմերում, ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային

հետազոտական բազան, հատկապես Աֆրիկայում, ընդգրկելով տեղերում ունակությունների զարգացումը և համապատասխան հնարավորությունների ընդարձակումը, հատկապես այն երկրներում, որտեղ հետազոտական բազան ծայրահեղ թույլ է զարգացած՝ հատուկ ուշադրություն դարձնելով բազմառարկայական և սոցիալ-տնտեսական հետազոտություններին՝ ներգրավելով բնակչությանը;

e) հաշվի է առնում, այնտեղ որտեղ տեղին է, փոխադարձ կապը չքավորության, էկոլոգիական գործոններից առաջացած միգրացիայի և անապատացման միջև;

f) խրախուսում է ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային հետազոտական կազմակերպությունների միջև համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումը, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորներում, ավելի կատարյալ, արժողությամբ ընդունելի և մատչելի տեխնոլոգիաները զարգացնելու նպատակով՝ տեղական բնակչության և համայնքների արդյունավետ մասնակցության հիման վրա կայուն առաջադիմության ապահովման համար; և

g) նպաստում է վնասվող շրջաններում ջրային ռեսուրսների ծավալի մեծացմանը, այդ թվում ամպերի վրա քիմիական մեթոդներով ազդելու օգնությամբ:

2. Կոնկրետ տարածաշրջանների և ենթատարածաշրջանների համար ուսումնասիրությունների գերակայող ուղղությունները, որոնք արտահայտում են տեղական պայմանների յուրահատկությունները, պետք է ընդգրկվեն գործողությունների ծրագրերում: Կողմերի Կոնֆերանսը, գիտության և տեխնիկայի Կոմիտեի առաջարկությունների հիման վրա, պարբերաբար անցկացնում է հետազոտությունների գերակայող ուղղությունների ամփոփում:

Հոդված 18

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ, ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՄ

1. Փոխհամաձայնեցված պայմաններում և համաձայն իր սեփական համապատասխան ազգային օրենսդրության և/կամ քաղաքականության Կողմերը պարտավորվում են

խրախուսել, ֆինանսավորել և/կամ թեթևացնել էկոլոգիապես մաքուր, տնտեսապես հուսալի և սոցիալապես ընդունելի տեխնոլոգիաների փոխանցումների ֆինանսավորումը, ձեռք բերումը, հարմարեցումը և զարգացումը, որոնք հարմար են անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման համար՝ վնասվող շրջաններում կայուն զարգացման նպատակներին հասնելուն աջակցելու նպատակով: Այդպիսի համագործակցությունը իրականացվում է երկկողմ և բազմակողմ հիմքերի վրա, կախված հանգամանքներից, ամբողջությամբ օգտագործելով միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների մասնագիտական գիտելիքները: Կողմերը, մասնավորապես.

a) լիարժեք կերպով օգտագործում են գոյություն ունեցող համապատասխան ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային տեղեկատվական համակարգերը և կոորդինացիոն - տեղեկատվական մեխանիզմները, առկա տեխնոլոգիաների և աղբյուրների մասին տեղեկատվության տարածման համար՝ կապված դրանց կիրառումից շրջակա միջավայրի համար վտանգավորության, և հիմնական պայմանների հետ, որոնց վրա դրանք կարող են առաջանալ;

b) թեթևացնում են մուտքը հատկապես վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի համար, բարենպաստ պայմաններում, այդ թվում զեղջ և արտոնության պայմաններով, փոխադարձ պայմանավորվածությամբ, հաշվի առնելով մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը, այն տեխնոլոգիաներին, որոնք առավել ընդունելի են գործնական կիրառման համար տեղական բնակչության հատուկ կարիքները բավարարելու նպատակով՝ հատկացնելով առաջնակարգ ուշադրություն այդպիսի տեխնոլոգիաների սոցիալական, մշակութային, տնտեսական և էկոլոգիական ներգործությանը;

c) թեթևացնում են տեխնոլոգիական համագործակցությունը տուժված երկրների - Կողմերի միջև՝ ֆինանսական օգնություն կան այլ համապատասխան միջոցներ տրամադրելու ճանապարհով;

d) տարածում են տեխնիկական համագործակցություն վնասվող երկրների -Կողմերի հետ՝ ընդգրկելով, երբ դա նպատակահարմար է , համատեղ ձեռնարկություններ,

հատկապես այնպիսի սեկտորներին, որոնք նպաստում են գոյության միջոցների այլընտրանքային աղբյուրների ձևավորմանը; և

e) ընդունում են պատշաճ միջոցներ՝ ներքին շուկայական պայմանների և ազդակների ստեղծման համար ֆինանսական կամ այլ բնույթի, որոնք նպաստում են համապատասխան տեխնոլոգիաների և գիտելիքների զարգացմանը, փոխանցմանը, ձեռք բերմանն ու հարմարեցմանը՝ ընդգրկելով միջոցներ, մտավոր սեփականության իրավունքի համարժեք և արդյունավետ պաշտպանությունը ապահովելու նպատակով:

2. Կողմերը, իրենց համապատասխան հնարավորությունների համաձայն և հաշվի առնելով իրենց համապատասխան ազգային օրենսդրությունը և/կամ քաղաքականությունը, պաշտպանում, խրախուսում և օգտագործում են, մասնավորապես, համապատասխան ավանդական և տեղական տեխնոլոգիաները, գիտելիքները, նոու-հաու և փորձը և այդ նպատակով նրանք պարտավորվում են.

a) կազմել ամփոփ տեղեկատվություն այնպիսի տեխնոլոգիաների, գիտելիքների, նոու-հաու և փորձի և տեղական բնակչության մասնակցությամբ դրանց օգտագործման հնարավորությունների մասին և պատշաճ կերպով տարածել այդպիսի տեղեկատվությունը՝ համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցությամբ;

b) ապահովել, որպեսզի այդպիսի տեխնոլոգիաները, գիտելիքները, նոու-հաու և փորձը պատշաճ կերպով պաշտպանված լինեն և որպեսզի, տեղական բնակչությունը արդարացի և փոխհամաձայնեցված պայմաններով ստանա անմիջական օգուտ դրանց առևտրական ցանկացած օգտագործումից կամ դրանց վրա հիմնված ցանկացած տեխնիկական զարգացումից;

c) խրախուսել և ակտիվ օժանդակել այդպիսի տեխնոլոգիաների, գիտելիքների, նոու-հաու և փորձի կամ դրանց հիման վրա մշակվող նոր տեխնոլոգիաների կատարելագործմանը և տարածմանը; և

d) խրախուսել պատշաճ կերպով այդպիսի տեխնոլոգիաների հարմարեցումը, գիտելիքները, նոու-հաու և փորձը լայն օգտագործման համար և համապատասխան ձևով ապահովել դրանց ինտեգրացիան ժամանակակից տեխնոլոգիաների հետ:

Բաժին 3.

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 19

ՆԵՐՈՒԺԻ ՍՏԵՂԾՈՒՄ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

1. Կողմերը ընդունում են ներուժի ստեղծման կարևորությունը՝ այսինքն հաստատությունների ստեղծմանը, կադրերի պատրաստմանը և տեղերում համապատասխան հնարավորությունների զարգացմանը՝ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ջանքերի շրջանակներում: Նրանք պատշաճ կերպով աջակցում են ներուժի ստեղծմանը հետևյալ ճանապարհով.

a) ապահովելով բոլոր մակարդակներով տեղական բնակչության լրիվ մասնակցությունը, և մասնավորապես տեղական մակարդակով, հատկապես կանանց և երիտասարդության՝ ոչ կառավարական և տեղական կազմակերպությունների համագործակցությամբ;

b) ամրապնդելով գիտա-հետազոտական ներուժը ազգային մակարդակով՝ անապատացման և երաշտի ոլորտում;

c) ստեղծելով և/կամ ամրապնդելով, կախված իրադրությունից, գիտելիքների և փորձի քարոզարշավի ծառայությունները և օժանդակ ծառայություններ՝ համապատասխան տեխնոլոգիական մեթոդների և ձևերի առավել արդյունավետ տարածման, ինչպես նաև տեղերում աշխատակիցների և գյուղական կազմակերպությունների անդամների պատրաստման համար՝ այն հարցերի ուղղությամբ, որոնք վերաբերվում են, բնակչության մասնակցության հիմքի վրա, բնական ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման մոտեցումներին;

d) ուժեղացնելով գիտելիքների, նոու-հաու փորձի և տեղական բնակչության պրակտիկայի օգտագործման և տարածման ուղղությամբ գործունեությունը տեխնիկական օգնության ծրագրի շրջանակներում;

e) հարմարեցնելով, անհրաժեշտության դեպքում,էկոլոգիապես ընդունելի համապատասխան տեխնոլոգիաների և գյուղատնտեսության ու անասնապահության ավանդական մեթոդների վարումը ժամանակակից սոցիալ - տնտեսական պայմաններին;

f) անցկացնելով կադրերի համապատասխան պատրաստում և տրամադրելով համապատասխան տեխնոլոգիաներ ՝ կապված էներգիայի այլընտրանքային աղբյուրների, հատկապես էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման հետ՝ բնափայտային վառելիքից կախվածության նվազեցման նպատակով;

g) համագործակցության, փոխհամաձայնեցված հիմքի վրա, մշակել և իրականացնել ծրագրեր տեղեկատվության հավաքի, վերլուծության և փոխանակման ոլորտում, հոդված 16-ի համապատասխան վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի ընդունակությունների ամրապնդման նպատակով;

h) գոյության միջոցների այլընտրանքային աղբյուրների նորարարական զարգացման ուղիով ՝ ընդգրկելով նոր հմտությունների ձեռք բերման ոլորտում նախապատրաստումը;

i) նախապատրաստելով պահանջվող ղեկավար և կառավարման անձնակազմին, ինչպես նաև այն աշխատակիցներին, որոնք պատասխանատու են երաշտի պայմանների վաղ նախազգուշացման և պարենի արտադրությանը վերաբերվող տվյալների հավաքի և վերլուծության, տեղեկատվության տարածման և օգտագործման համար;

j) գոյություն ունեցող և, անհրաժեշտության դեպքում, նոր ստեղծված ազգային հաստատությունների և իրավական շրջանակների ավելի արդյունավետ գործունեությամբ ՝ ռազմավարական ծրագրավորման և կառավարման ամրացման հետ զուգահեռ; և

k) վնասվող երկրներում ներուժի ստեղծման գործընթացի ակտիվացման համար, օգտագործելով, ճանաչողական ուղևորությունների փոխանակման ծրագրերը՝ ուսուցման և ուսումնասիրության երկարաժամկետ փոխկապակցված գործընթացի միջոցով:

2. Վնասվող զարգացող երկրները - Կոնվենցիայի Կողմերը, համագործակցելով մյուս Կողմերի և իրավասու միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ, պատշաճ կերպով անցկացնում են տեղական և ազգային մակարդակներում առկա ներուժի, միջոցների և հնարավորությունների միջառարկայական ամփոփում ՝ դրանց ուժեղացման համար:

3. Մասնակիցները համագործակցում են իրար հետ կամ իրավասու միջկառավարական կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև համագործակցում են ոչ կառավարական կազմակերպությունների հետ ինչպես վնասվող, այնպես էլ, երբ դա անհրաժեշտ է, չտուժված երկրներում - Կոնվենցիայի Կողմերում, հասարակության իրազեկության ծրագրերի և գիտելիքների տարածման գործընթացը իրականացնելու և դրան աջակցելու ուղղությամբ ՝ անապատացման և երաշտի պատճառների և հետևանքների և ներկա Կոնվենցիայի նպատակներին հասնելու կարևորության ավելի խորը ըմբռնումը ապահովելու նպատակով: Այդ նպատակով նրանք.

a) անցկացնում են տեղեկատվական կամպանիա ՝ ուղղորդված հասարակության լայն շրջանակներին;

b) օժանդակում են, մշտական պայմանով, ապահովելու հասարակության մուտքը համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև հասարակայնության լայն մասնակցությանը ուսուցման և գիտելիքների տարածման գործընթացին;

c) խրախուսում են հասարակության մեջ գիտելիքների տարածմանը նպաստող ասոցիացիաների ստեղծմանը;

d) մշակում են լուսավորչական և տեղեկատվական նյութեր, հնարավորության դեպքում տեղական լեզվով, և իրականացնում են այդպիսի նյութերի փոխանակումը; փոխանակվում են փորձագետներով և գործուղում են փորձագետներին վնասվող

զարգացող երկրներում - Կոնվենցիայի Կողմերում համապատասխան ուսումնական ծրագրերի և գիտելիքների տարածման ծրագրերի հարցերով կադրերի պատրաստման նպատակով և լիարժեք օգտագործում են միջազգային հեղինակավոր օրգաններում տրամադրության տակ եղած առկա համապատասխան ուսումնական նյութերը;

e) անցկացնում են կարիքների գնահատում վնասվող շրջաններում կրթության ոլորտում և մշակում են համապատասխան դպրոցական ուսումնական պլաններ և ընդարձակում, անհրաժեշտության չափով, ուսումնական ծրագրերը և գրագիտության ուսուցման ծրագրերը մեծահասակների և հնարավոր բոլորի համար՝ հատկապես աղջիկների և կանանց համար, վնասվող շրջաններում բնական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման բնույթի որոշման, և դրանց կառավարման հարցերի ուղղությամբ; և

f) մշակում են միջառարկայական ծրագրեր, բնակչության ընդգրկմամբ, որոնք ներառում են կրթության համակարգում անապատացման և երաշտի խնդիրների հետ ծանոթացման հարցեր, ինչպես նաև ոչ պաշտոնական ուսուցման ծրագրեր, ծրագրեր մեծահասակների և ծրագրեր հեռակա ու գործնական ուսուցման համար:

4. Կողմերի Կոնֆերանսը հիմնում և/կամ ամրացնում է տարածաշրջանային ուսուցման կենտրոնների և կադրերի պատրաստման ցանցերը՝ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման համար: Այդ ցանցերի աշխատանքը պատշաճ ձևով համակարգվում է հիմնված կամ լիազորված հաստատության կողմից՝ համապատասխան գիտական, տեխնիկական և կառավարող անձնակազմի պատրաստման և ամրացման նպատակով, եթե անհրաժեշտ է, նաև հաստատությունների կողմից, որոնք վնասվող երկրներում - Կոնվենցիայի Կողմերում պատասխանատու են ուսուցման և կադրերի պատրաստման համար ծրագրերի համաձայնեցման և նրանց միջև փորձի փոխանակման կազմակերպման նպատակով: Այդ ցանցերը սերտորեն համագործակցում են համապատասխան միջկառավարական կազմակերպությունների հետ՝ ջանքերի կրկնությունից խուսափելու նպատակով:

Հոդված 20

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Նկատի առնելով Կոնվենցիայի նպատակին հասնելու համար ֆինանսավորման կենտրոնական նշանակությունը, Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը , հաշվի առնելով իրենց հնարավորությունները, ապահովելու համար այն, որպեսզի անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ծրագրերին հատկացվեն համարժեք ֆինանսական ռեսուրսներ:

2. Այս կապակցությամբ զարգացած երկրները - Կոնվենցիայի Կողմերը, առաջնահերթություն տալով վնասվող աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին և դրանով չանտեսելով այլ տարածաշրջաններում հոդված 7-ին համապատասխան ՝ վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին պարտավորվում են.

a) համախմբել նշանակալից ֆինանսական ռեսուրսներ, ներառյալ նպաստները և զեղջ պայմաններով փոխառությունները, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ծրագրերի իրականացման օժանդակության նպատակով;

b) աջակցել համարժեք, հարմարադեպ և կանխագուշակվող ֆինանսական ռեսուրսների համախմբանը , ներառյալ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի նոր և լրացուցիչ ֆինանսական միջոցները, ծածկելու համար լրացուցիչ ծախսերը այն գործունեության, որը կապված է անապատացման հետ և որը համապատասխանում է դրա չորս գլխավոր մարզերին ՝ համաձայն Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ստեղծման մասին փաստաթղթի համապատասխան դրույթների;

c) թեթևացնել, միջազգային համագործակցության օգնությամբ, տեխնոլոգիաների, գիտելիքների և նոու-հաու փոխանցումը; և

d) ուսումնասիրել, վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի հետ համագործակցությամբ, նոր մեթոդները և խթանները ՝ ռեսուրսների համախմբման և նպատակաուղղման համար, ներառելով այնպիսիները, որոնք տրամադրվում են ֆոնդերի, ոչ կառավարական կազմակերպությունների և մասնավոր սեկտորի այլ կազմակերպությունների կողմից, հատկապես պարտքի մարման հաշվին ծախսերի հաշվարկի համակարգերը և տարբեր նոր միջոցները, որոնք մեծացնում են վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի, հատկապես աֆրիկական երկրների,

ֆինանսավորման ծավալը՝ արտաքին պարտքի ծանրաբեռնվածության կրճատման ճանապարհով:

3. Վնասվող զարգացող երկրները - Կոնվոնցիայի Կողմերը, հաշվի առնելով իրենց հնարավորությունները, պարտավորվում են համախմբել համարժեք ֆինանսական ռեսուրսներ իրենց ազգային գործողությունների ծրագրերի իրականացման համար:

4. Ֆինանսական ռեսուրսների համախմբման ընթացքում Կողմերը ձգտում են լիարժեք օգտագործել բոլոր ազգային, երկկողմ և բազմակողմ ֆինանսավորման աղբյուրներն ու մեխանիզմները և մշտապես ձգտել դրանց որակական կատարելագործմանը՝ օգտագործելով բանկային միավորումները, համատեղ ծրագրերը և զուգահեռ ֆինանսավորումը, ինչպես նաև ձգտում են ներգրավել մասնավոր սեկտորի աղբյուրներն ու մեխանիզմները, այդ թվում ոչ կառավարական կազմակերպությունների: Այդ նպատակով Կողմերը լիարժեք օգտագործում են գործարար մեխանիզմները, որոնք ստեղծում են հոդված 14-ին համապատասխան:

5. Ֆինանսական ռեսուրսների համախմբման նպատակով, որն անհրաժեշտ է վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման համար, Կողմերը.

a) նպատակահարմրեցնում և ուժեղացնում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման համար արդեն առանձնացված ռեսուրսների կառավարումը՝ դրանց առավել արդյունավետ և գործուն օգտագործման, հաջողությունների և թերությունների գնահատման, դրանց արդյունավետ օգտագործման ուղուց խոչընդոտների վերացման ուղղությամբ և, անհրաժեշտության դեպքում, ծրագրերի վերակողմնորոշման ուղիով ընդունված սույն Կոնվենցիային համապատասխան համալիր երկարաժամկետ մոտեցման լույսի տակ;

b) բազմակողմ ֆինանսական հաստատությունների ղեկավար օրգանների շրջանակներում, այդ թվում միջազգային և տարածաշրջանային ֆինանսական հաստատությունների, օրգանների և հիմնադրամների, ներառյալ տարածաշրջանային զարգացման բանկերն ու հիմնադրամները, տալիս են առաջնահերթ նշանակություն և

հատկացնում են պատշաճ ուշադրություն վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին, հատկապես աֆրիկական երկրներին ցուցաբերված աջակցությանը՝ Կոնվենցիայի իրականացմանը նպաստող գործունեության անցկացման, հատկապես գործողությունների ծրագրերին, որոնք կիրառվում են տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին հավելվածների շրջանակներում; և

c) ուսումնասիրում են ուղիներ, որոնցով կարելի է ամրապնդել տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցությունը՝ ազգային մակարդակով ձեռնարկվող ջանքերին օժանդակելու համար:

6. Կոնվենցիայի մյուս Կողմերը խրախուսում են վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի համար կամավոր հիմունքներով անապատացմանը և/կամ ֆինանսական ռեսուրսներին վերաբերվող գիտելիքների, նոու-հաու և տեխնոլոգիաների տրամադրումը:

7. Վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի, հատկապես աֆրիկական երկրների կողմից, Կոնվենցիայով իրենց պարտավորությունների լիարժեք կատարմանը զգալի չափով կնպաստի զարգացած երկրների - Կոնվենցիայի Կողմերի կողմից Կոնվենցիայով իրենց պարտավորությունների կատարումը, ընդգրկելով, մասնավորապես, ֆինանսական ռեսուրսների և տեխնոլոգիաների փոխանցմանը վերաբերվող պարտավորությունները: Իրենց պարտավորությունները կատարելիս զարգացած երկրները - Կոնվենցիայի Կողմերը պետք է լիարժեք հաշվի առնեն, որ տնտեսական և սոցիալական զարգացումը և չքավորության վերացումը հանդիսանում են վնասվող զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի, հատկապես աֆրիկական երկրների, հիմնական գերակայությունները:

Հոդված 21

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Կոնվենցիայի իրականացման նպատակով Կողմերի Կոնֆերանսը աջակցում է ֆինանսական մեխանիզմների առկայության ապահովմանը և խրախուսում է այդպիսի ֆինանսական ռեսուրսների առավելագույն ապահովման մեխանիզմները՝ վնասվող

զարգացող երկրների - Կոնվենցիայի Կողմերի, հատկապես աֆրիկական երկրների համար: Դրա համար Կողմերի Կոնֆերանսը քննարկում է, մասնավորապես, մոտեցումների և քաղաքականության ընդունումը, որոնք.

a) նպաստում են ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովմանը ՝ ի կատարումն Կոնվենցիայի համապատասխան դրույթների գործունեության համար;

b) խրախուսում են ֆինանսավորման շատ աղբյուրների օգտագործումը նախատեսող մոտեցումները, մեխանիզմները և պայմանավորվածությունները, ինչպես նաև դրանց գնահատումը հոդված 20-ին համապատասխան;

c) տրամադրում են, կանոնավոր կերպով, շահագրգիռ կողմերին և համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին տեղեկություններ ֆինանսական միջոցների առկա աղբյուրների և ֆինանսավորման պայմանների մասին՝ դրանց միջև համակարգումը խրախուսելու նպատակով;

d) աջակցում են պատշաճ մեխանիզմների ստեղծմանը, այնպիսիք ինչպիսիք են անապատացման դեմ պայքարի համար ազգային հիմնադրամները, ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությամբ մեխանիզմները ՝ վնասվող զարգացող երկրների տեղերում ֆինանսական ռեսուրսների գործնական և արդյունավետ ուղղորդման համար; և

e) ամրացնում են գոյություն ունեցող ֆոնդերը և ֆինանսական մեխանիզմները ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով, հատկապես Աֆրիկայում, Կոնվենցիայի իրականացման ավելի արդյունավետ օժանդակության ապահովման համար:

2. Կողմերի Կոնֆերանսը խրախուսում է նաև Միացյալ Ազգերի Կազմակերպության համակարգի տարբեր մեխանիզմների և բազմակողմ ֆինանսական հաստատությունների միջոցով տրամադրվող աջակցությունը ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով գործունեությանը, որոնք զարգացող երկրներին -

Կոնվենցիայի Կողմերին հնարավորություն են տալիս կատարել Կոնվենցիայով իրենց պարտավորությունները:

3. Վնասվող զարգացող երկրները - Կոնվենցիայի Կողմերը օգտագործում են, իսկ անհրաժեշտ դեպքերում ստեղծում և/կամ ամրացնում են զարգացման ազգային ծրագրերում ընդգրկված ազգային համակարգող մեխանիզմները, որը կապահովի բոլոր առկա ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Նրանք օգտագործում են նաև մասնակցության գործընթացը ՝ ներգրավելով ոչ կառավարական կազմակերպություններին, տեղական խմբերին և մասնավոր սեկտորին մշակման ընթացքում միջոցների հավաքին, ինչպես նաև ծրագրերի իրականացման ընթացքում և տեղական մակարդակով խմբերի կողմից մուտքը դեպի ֆինանսական միջոցները: Այդ գործողությունները կարող են ուժեղացվել, ավելի արդյունավետ համակարգման օգնությամբ և ճկուն ծրագրավորմամբ, նրանց կողմից, ովքեր տրամադրում են օգնությունը:

4. Արդյունավետության բարձրացման և առկա ֆինանսական մեխանիզմների արգասիքի նպատակներով սույնով ստեղծվում է Գլոբալ մեխանիզմ ՝ օժանդակելու համար միջոցներին, որոնք տանում են նշանակալից ֆինանսական ռեսուրսների համախմբմանը և ուղղորդմանը ՝ ներառյալ վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին անհատույց սկզբունքով և/կամ զեղջ պայմաններով տեխնոլոգիաների փոխանցումը: Այդ Գլոբալ մեխանիզմը գործում է Կողմերի Կոնֆերանսի ղեկավարությամբ և կառավարմամբ և հաշվետու է նրա առաջ:

5. Կողմերի Կոնֆերանսը իր առաջին հերթական նստաշրջանում որոշում է այն կազմակերպությունը, որին պետք է պատկանի Գլոբալ մեխանիզմը: Կողմերի Կոնֆերանսը և կազմակերպությունը, որը նա կորոշի, համաձայնեցնում են այդ Գլոբալ մեխանիզմի գործունեության պայմանները ՝ ապահովելու համար, մասնավորապես, այն, որպեսզի այդպիսի Մեխանիզմը.

a) կատարի համապատասխան երկկողմ և բազմակողմ համագործակցության ծրագրերի բացահայտում և իրականացնի հաշվառում, որոնք կանխիկ գոյություն ունեն Կոնվենցիայի իրականացման համար;

b) տրամադրի Կողմերին խորհրդատվություն, հարցման դեպքում, ֆինանսավորման նոր մեթոդների և ֆինանսական օգնության աղբյուրների վերաբերյալ և ազգային մակարդակով համագործակցության ուղղությամբ գործունեության համակարգման կատարելագործման վերաբերյալ;

c) տրամադրի տեղեկություն շահագրգիռ Կողմերին և համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին, ֆինանսական միջոցների գոյություն ունեցող աղբյուրների մասին և ֆինանսավորման եղանակների վերաբերյալ, նրա համար, որպեսզի նպաստի նրանց միջև համակարգման իրականացումը; և

d) ներկայացնի զեկույցներ իր գործունեության մասին Կողմերի Կոնֆերանսին՝ սկսած իր երկրորդ հերթական նստաշրջանից:

6. Կողմերի Կոնֆերանսը իր առաջին նստաշրջանում անցկացնում է համապատասխան միջոցառումներ իր կողմից որոշված կազմակերպության վերաբերյալ, որին պատկանում է Գլոբալ մեխանիզմը, նպատակ ունենալով ապահովել այդպիսի մեխանիզմի վարչական գործունեությունը, ելնելով հնարավորությունից, գոյություն ունեցող բյուջետային միջոցներից և մարդկային ռեսուրսներից:

7. Կողմերի Կոնֆերանսն իր երրորդ հերթական նստաշրջանում քննության կենթարկի Գլոբալ Մեխանիզմի քաղաքականությունը, օպերատիվ պայմանները և գործունեությունը, որը հաշվետու է նրա առաջ կետ 4-ին համապատասխան՝ հաշվի առնելով հոդված 7-ի դրույթները: Այդ ամփոփման հիման վրա նա քննության կառնի և կընդունի համապատասխան միջոցներ:

ՄԱՍ IV

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 22

ԿՈՂՄԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

1. Սույնով հիմնադրվում է Կողմերի Կոնֆերանսը:

2. Կողմերի Կոնֆերանսը հանդիսանում է ներկա Կոնվենցիայի բարձրագույն օրգանը: Այն իր մանդատի սահմաններում, ընդունում է որոշումներ , որոնք անհրաժեշտ են դրա արդյունավետ իրականացմանը օժանդակելու համար: Այն, մասնավորապես.

a) կանոնավոր կերպով անցկացնում է Կոնվենցիայի իրականացման և դրա պայմանավորվածությունների գործունեության ամփոփում՝ ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով կուտակված փորձի և գիտա - տեխնիկական գիտելիքների զարգացման հիման վրա;

b) խրախուսում և թեթևացնում է տեղեկատվության փոխանակումը Կողմերի ձեռնարկած միջոցների մասին, և որոշում տեղեկատվության ներկայացման ձևը և ժամանակացույցը հոդված 26-ին համապատասխան, քննարկում է զեկուցումները և կայացնում է հանձնարարություններ այդ զեկույցների վերաբերյալ;

c) հիմնում է այնպիսի օժանդակ օրգաններ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայի իրականացման համար;

d) քննարկում է օժանդակ օրգանների կողմից իրեն ներկայացրած զեկույցները և իրականացնում է դրանց գործունեության ղեկավարումը;

e) համաձայնեցնում և փոխհամաձայնեցման հիման վրա ընդունում է արարողակարգի կանոնները և ֆինանսական կանոնները՝ իր և ցանկացած օժանդակ օրգանների համար;

f) ընդունում է Կոնվենցիայի ուղղումները՝ հոդվածներ 30 և 31-ին համապատասխան;

g) հաստատում է իր և օժանդակ օրգանների գործունեության ծրագիրը ու բյուջեն և նախատեսում է անհրաժեշտ կազմակերպչական միջոցառումներ դրանց ֆինանսավորման համար;

h) ըստ անհրաժեշտության օժանդակության համար դիմում է ազգային, միջազգային, միջկառավարական և ոչ կառավարական բնույթի հեղինակավոր օրգաններին ու հաստատություններին և օգտագործում է դրանց կողմից հատկացված ծառայությունները և տեղեկատվությունը;

i) խրախուսում և ամրացնում է կապերը մյուս համապատասխան կոնվենցիաների հետ՝ խուսափելով այդ դեպքում ջանքերի կրկնությունից; և

j) իրականացնում է նաև այլ գործառույթներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար:

3. Կողմերի Կոնֆերանսը իր առաջին նստաշրջանում փոխհամաձայնեցման հիման վրա, ընդունում է արարողակարգի իր սեփական կանոնները, որոնք ընդգրկում են իրենց մեջ այն հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու արարողակարգերը, որոնք չեն ընդգրկված սույն Կոնվենցիայում նախատեսված որոշումներ ընդունելու արարողակարգերում: Այդպիսի արարողակարգերում կարող է վերապահվել, թե ձայների ինչ մեծամասնություն է անհրաժեշտ կոնկրետ որոշումներ ընդունելու համար:

4. Կողմերի Կոնֆերանսի առաջին նստաշրջանը գումարվում է ժամանակավոր քարտուղարության կողմից, որի մասին նշվում է հոդված 36 -ում և անցկացվում է ոչ ուշ, քան Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվից մեկ տարի հետո: Երկրորդ, երրորդ և չորրորդ հերթական նստաշրջանները անցկացվում են ամեն տարի, իսկ հաջորդ հերթական նստաշրջանները անցկացվում են երկու տարին մեկ անգամ, եթե Կողմերի Կոնֆերանսը չի ընդունում այլ որոշում:

5. Կողմերի Կոնֆերանսի արտահերթ նստաշրջանները գումարվում են այնպիսի տարբեր ժամկետներում, որոնց մասին Կողմերի Կոնֆերանսը կարող է ընդունել որոշում հերթական նստաշրջանում կամ ցանկացած Կողմի գրավոր խնդրանքով՝ պայմանով, որ երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ մշտական Քարտուղարությունը կհայտնի այդ խնդրանքի մասին Կողմերին, նրան կաջակցեն Կողմերի ընդհանուր թվից ոչ պակաս քան մեկ երրորդը:

6. Յուրաքանչյուր հերթական նստաշրջանում Կողմերի Կոնֆերանսը ընտրում է Նախագահություն: Նախագահության կառուցվածքը և գործառույթները որոշվում են արարողակարգի կանոններով: Նախագահության նշանակման ժամանակ պատշաճ ուշադրություն է հատկացվում աշխարհագրական արդարացի տեղաբաշխման ապահովման և այն երկրների համարժեք ներկայացուցչության անհրաժեշտությանը, որոնք տառապում են երաշտից և/կամ անապատացումից, հատկապես Աֆրիկայում:

7. Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, նրա մասնագիտացված հաստատությունները, ինչպես նաև այդ հաստատությունների անդամ ցանկացած պետություն կամ դրանց կից ցանկացած դիտորդ, որոնք չեն հանդիսանում Կոնվենցիայի Կողմեր, կարող են ներկայացվել Կողմերի Կոնֆերանսի նստաշրջանում դիտորդի կարգավիճակով: Ցանկացած օրգան կամ ցանկացած հաստատություն, լինի ազգային կամ միջազգային, կառավարական կամ ոչ կառավարական , որը Կոնվենցիայի գործողությունների ոլորտին առնչվող հարցերում ունի իրավասություններ և որը հաղորդել է մշտական Քարտուղարությանը Կողմերի Կոնֆերանսի նստաշրջանում դիտորդի կարգավիճակով ներկայացվելու իր ցանկության մասին, կարող է թույլատրվել մասնակցելու դրանում, եթե դրա դեմ չեն առարկում ներկա Կողմերի առնվազն մեկ երրորդը: Դիտորդների թույլտվությունն ու մասնակցությունը կարգավորվում են Կողմերի Կոնֆերանսի ընդունած արարողակարգի կանոններով:

8. Կողմերի Կոնֆերանսը կարող է խնդրանքով դիմել հեղինակավոր ազգային և միջազգային համապատասխան փորձ ունեցող կազմակերպություններին, իրեն տրամադրելու տեղեկատվություն, որոնք վերաբերվում են հոդված 16-ի է) կետին հոդված 17-ի 1 գ) կետին և հոդված 18-ի 2 բ) կետին:

Հոդված 23

ՄՇՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Սույնով հիմնադրվում է մշտական Քարտուղարությունը:

2. Մշտական Քարտուղարությունը կատարում է հետևյալ գործառույթները.

a) կազմակերպում է Կողմերի Կոնֆերանսի և դրա օժանդակ օրգանների, հիմնադրված Կոնվենցիային համապատասխան, նստաշրջանները և մատուցում է դրանց անհրաժեշտ ծառայություններ;

b) ապահովում է իրեն ներկայացված զեկույցների բանաքաղությունը (կոմպիլյացիա) և փոխանցումը;

c) նպաստում է վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին, հատկապես Աֆրիկայում, իրենց խնդրանքով բանաքաղությանը և տեղեկատվության փոխանցմանը օգնություն ցուցաբերելուն, որը պահանջվում է Կոնվենցիային համապատասխան;

d) համակարգում է իր գործունեությունը մյուս համապատասխան միջազգային օրգանների և կոնվենցիաների քարտուղարությունների հետ;

e) կարգավորում է, Մասնակիցների Կոնֆերանսի ղեկավարությամբ, այնպիսի վարչական և պայմանագրային կապեր, ինչպիսիք կարող են պահանջվել իր գործառույթների արդյունավետ կատարման համար;

f) պատրաստում է զեկույցներ իր գործառույթների կատարման մասին, սույն Կոնվենցիայի համաձայն, և ներկայացնում դրանք Կողմերի Կոնֆերանսին; և

g) կատարում է ցանկացած այլ քարտուղարական գործառույթներ, որոնք կարող են որոշվել Կողմերի Կոնֆերանսի կողմից:

3. Կողմերի Կոնֆերանսը իր առաջին նստաշրջանում նշանակում է մշտական Քարտուղարություն և միջոցներ է ձեռք առնում դրա գործունեության ապահովման ուղղությամբ:

Հոդված 24

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

1. Սույնով հիմնադրվում է գիտության և տեխնիկայի Կոմիտեն, որպես Կողմերի Կոնֆերանսի օժանդակ օրգան՝ նրան անապատացման դեմ պայքարի և երաշտի

հետևանքների մեղմացման վերաբերյալ գիտա - տեխնիկական հարցերում տեղեկատվություն և խորհրդատվություն տալու համար: Այդ Կոմիտեի նստաշրջանները անցկացվում են Կողմերի Կոնֆերանսի հերթական նստաշրջանների հետ համատեղ, կրում են բազմաառարկայական բնույթ և բաց են բոլոր Կողմերի մասնակցության համար: Նրա կազմի մեջ մտնում են կառավարության ներկայացուցիչներ, որոնք ունեն բանիմացություն (կոմպետենցիա) գիտելիքների համապատասխան ոլորտներում: Կողմերի Կոնֆերանսը իր առաջին նստաշրջանում որոշում է ընդունում Կոմիտեի շրջանակների վերաբերյալ:

2. Կողմերի Կոնֆերանսը կազմում և վարում է անկախ փորձագետների հաշվառման ցուցակ, որոնք ունեն փորձ և գիտելիքներ համապատասխան ոլորտներում: Այդ ցուցակը կազմվում է Կողմերի գրավոր ներկայացման հիման վրա փորձագետի նշանակման մասին՝ ելնելով բազմաառարկայական մոտեցման և աշխարհագրական լայն ներկայացուցչական անհրաժեշտությունից:

3. Կողմերի Կոնֆերանսը անհրաժեշտության դեպքում կարող է նշանակել հատուկ խմբեր՝ Կոմիտեի միջոցով անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ գիտա - տեխնիկական գիտելիքների ոլորտների ժամանակակից դրույթներին վերաբերվող առանձին հարցերի ուղղությամբ իրեն տեղեկատվություն և խորհրդատվություն տալու համար: Այդ խմբերի կազմում կընդգրկվեն առանձին փորձագետներ, որոնց ազգանունները վերցված են ցուցակից՝ ելնելով բազմաառարկայական մոտեցման և աշխարհագրական լայն ներկայացուցչական անհրաժեշտությունից: Այդ փորձագետները կօգտագործեն տեղերում գիտական և գործնական աշխատանքի փորձը և կնշանակվեն Կողմերի Կոնֆերանսի կողմից Կոմիտեի առաջարկությամբ: Կողմերի Կոնֆերանսը որոշում է ընդունում այդ խմբերի աշխատանքի վարման և պայմանների շրջանակի վերաբերյալ:

Հոդված 25

ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՍՏԵՂԾՈՒՄ

1. Գիտության և տեխնիկայի Կոմիտեն, Կողմերի Կոնֆերանսի ղեկավարությամբ, նախատեսում է կատարել ուսումնասիրություններ և գնահատել համապատասխան առկա ցանցերը, ինստիտուտները, հաստատությունները և օրգանները, որոնք ցանկություն ունեն

ընդգրկվելու ցանցի կազմում: Այդպիսի ցանցի առկայությունը կնպաստի Կոնվենցիայի իրականացմանը:

2. ՈՒսումնասիրության և գնահատման արդյունքների հիման վրա, որոնց մասին խոսվում է կետ 1- ում, գիտության և տեխնիկայի Կոմիտեն Կողմերի Կոնֆերանսին ներկայացնում է տեղային, ազգային և այլ մակարդակներով ցանցերի բաղադրամասերի ստեղծման ու ամրացման ուղիների և օժանդակության միջոցների մասին, բավարարելու համար թեմատիկ պահանջները, որոնց մասին խոսվում է Կոնվենցիայի 16 - 19 հոդվածներում:

3. Հաշվի առնելով այդ առաջարկությունները Կողմերի Կոնֆերանսը.

a) որոշում է այն ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային բաղադրամասերը, որոնք ավելի են համապատասխանում ցանցի ստեղծման համար, և դրանց համար հանձնարարում է օպերատիվ արարողակարգեր և ժամանակացույց; և

b) որոշում է բաղադրամասերը, որոնք բոլոր մակարդակներով առավել հարմար են այդպիսի ցանցի ստեղծմանը և ամրացմանը աջակցելու համար:

ՄԱՍ V

ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԵՐ

Հոդված 26

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1. Յուրաքանչյուր Կողմը մշտական Քարտուղարության միջոցով Կողմերի Կոնֆերանսին է ներկայացնում, նրա հերթական նստաշրջաններում քննարկելու համար զեկույցներ միջոցների մասին, որոնք նա կիրառում է սույն Կոնվենցիայի իրականացման նպատակով: Կողմերի Կոնֆերանսը որոշում է այդպիսի զեկույցների ներկայացման ժամանակացույցը և չափերը:

2. Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը ներկայացնում են ռազմավարության շարադրանքը՝ ընդունված ի կատարում հոդված 5 -ի և դրանց իրականացման մասին ցանկացած համապատասխան տեղեկատվություն:

3. Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը, որոնք իրականացնում են գործողությունների ծրագրեր, ի կատարում հոդվածներ 9 - 15-ի, ներկայացնում են այդ ծրագրերի մանրակրկիտ շարադրանքը և դրանց իրականացման միջոցառումները:

4. Վնասվող երկրների - Կոնվենցիայի Կողմերի ցանկացած խումբ կարող է ուղարկել համատեղ հաղորդում միջոցների մասին՝ ընդունված ենթատարածաշրջանային և/կամ տարածաշրջանային մակարդակներով գործողությունների ծրագրերի շրջանակներում:

5. Զարգացած երկրները - Կոնվենցիայի Կողմերը ներկայացնում են զեկույցներ միջոցների մասին՝ ընդունված գործողությունների ծրագրերի նախապատրաստմանը և իրականացմանը օգնություն ցույց տալու համար, ներառյալ ֆինանսական ռեսուրսների մասին տեղեկատվությունը, որոնք նրանք տրամադրել են կամ տրամադրում են սույն Կոնվենցիային համապատասխան:

6. Տեղեկատվությունը, որ տրամադրվում է ի կատարում 1- 4 կետերի, ինչքան հնարավոր է շուտ մշտական Քարտուղարության կողմից ուղարկվում է Կողմերի Կոնֆերանսին և ցանկացած համապատասխան օժանդակ օրգանին:

7. Կողմերի Կոնֆերանսն աջակցում է վնասվող զարգացող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին, հատկապես աֆրիկական երկրներին, իրենց խնդրանքով, տեխնիկական և ֆինանսական օժանդակություն տրամադրելուն, սույն հոդվածին համապատասխան, տեղեկատվության կազմման և տրամադրման, ինչպես նաև գործողությունների ծրագրերի հետ կապված տեխնիկական և ֆինանսական պահանջների բացահայտման համար:

Հոդված 27

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Կողմերի Կոնֆերանսը քննարկում և ընդունում է արարողակարգեր և կառուցվածքային մեխանիզմներ՝ լուծելու համար հարցեր, որոնք կարող են ծագել Կոնվենցիայի իրականացման նկատմամբ :

Հոդված 28

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Կողմերը կարգավորում են իրենց միջև ցանկացած վեճերը, որոնք վերաբերվում են Կոնվենցիայի մեկնաբանությանը կամ կիրառմանը՝ բանակցությունների ճանապարհով կամ ցանկացած խաղաղ միջոցներով՝ ըստ իրենց ընտրության:

2. Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հավանության կամ դրան միանալու ընթացքում կամ դրանից հետո ցանկացած ժամանակ, Կողմը, որը չի հանդիսանում տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն, կարող է գրավոր ձևով դիմում ներկայացնել Դեպոզիտարին այն մասին, որ Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման վերաբերյալ ցանկացած վեճում նա ընդունում է, իր վրա նույնպիսի պարտավորություն վերցրած ցանկացած Կողմի նկատմամբ, վեճերի կարգավորման հետևյալ մեկ կամ երկու միջոցների պարտադիր լինելը.

   a) արբիտրաժային հետաքննություն, Կողմերի Կոնֆերանսի կողմից հավելվածում ընդունված արարողակարգին համապատասխան, հնարավոր կարճ ժամկետում;

   b) վեճի հանձնումը Միջազգային Դատարան:

3. Կողմը, որը հանդիսանում է տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն, կարող է համանման բնույթի դիմում ներկայացնել արբիտրաժային հետաքննության վերաբերյալ՝ համապատասխան այն արարողակարգի, որ հիշատակված է կետ 2 -ի ա) ենթակետում :

4. Դիմումը, որը արված է կետ 2 -ին համապատասխան , մնում է ուժի մեջ մինչև դրա գործողության ժամկետի լրանալը, դրա պայմանին համապատասխան, կամ երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ գրավոր ծանուցումը նրան վերաբերվող կարծիքի մասին հանձնվել է պահպանության Դեպոզիտարի:

5. Դիմումի գործունեության ժամկետի լրանալը, դրա վերաբերյալ կարծիքի ծանուցումը կամ նոր դիմումը ոչ մի կերպ չի վնասում այն գործերին, որոնք գտնվում են Միջազգային Դատարանի կամ արբիտրաժային դատարանի քննությունում, եթե Կողմերը վեճի ժամանակ չեն պայմանավորվում այլ բանի մասին:

6. Եթե Կողմերը վեճի ժամանակ չընդունեցին համանման կամ ցանկացած արարողակարգ, կետ 2 -ին համապատասխան, կամ եթե նրանք չկարողացան կարգավորել իրենց վեճը տասերկու ամիս լրանալուց հետո, երբ մեկ Կողմը տեղեկացրել է մյուս Կողմին, որ իրենց միջև առկա է վեճ, այդ վեճը ներկայացվում է, վեճում ցանկացած Կողմի խնդրանքով, հաշտության՝ գործնական հնարավորության առկայության չափով այն արարողակարգերի համապատասխան, որոնք հաստատված են Կողմերի Կոնֆերանսի կողմից հավելվածում:

Հոդված 29

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1. Հավելվածները հանդիսանում են սույն Կոնվենցիայի անբաժան մասը և, եթե այլ բան ուղղակիորեն չի նախատեսվում, սույն Կոնվենցիայի ցանկացած վկայակոչում իրենից ներկայացնում է նաև դրա հավելվածների վկայակոչում:

2. Կողմերը տալիս են հավելվածների դրույթներին այնպիսի մեկնաբանություն, որը համապատասխանում է սույն Կոնվենցիայի հոդվածներից բխող իրենց իրավունքներին և պարտավորություններին:

Հոդված 30

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ

1. Ցանկացած Կողմ կարող է առաջարկել Կոնվենցիայի ուղղումներ:

2. Կոնվենցիայի ուղղումները ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի հերթական նստաշրջանի ժամանակ: Մշտական Քարտուղարությունը առաջարկվող ցանկացած ուղղումի տեքստը ուղարկում է Կողմերին ոչ պակաս քան վեց ամիս առաջ մինչև նիստի սկսվելը, որում այն առաջարկվում է ընդունել: Մշտական Քարտուղարությունը առաջարկվող ուղղումների տեքստը ուղարկում է նաև Կոնվենցիան ստորագրած Կողմերին:

3. Կողմերը ներդնում են բոլոր ջանքերը, փոխհամաձայնեցման հիման վրա, Կոնվենցիայի ցանկացած ուղղման վերաբերյալ համաձայնության հասնելու համար: Եթե փոխհամաձայնության հասնելու համար բոլոր հնարավորությունները սպառված են և համաձայնություն ձեռք չի բերվել, ապա որպես վերջին միջոց ուղղումը ընդունվում է նիստին ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի մեծամասնության երկու երրորդ ձայներով: Մշտական Քարտուղարությունը ընդունված ուղղումի տեքստը ուղարկում է Դեպոզիտարի, որը այն ուղարկում է բոլոր Կողմերին՝ վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու համար:

4. Վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ ուղղումին միանալու մասին փաստաթղթերը հանձնվում են պահպանության Դեպոզիտարի: Կետ 3- ին համապատասխան ընդունված ուղղումը ուժի մեջ է մտնում այն Կողմերի համար, որոնք ընդունել են այն, իննսուներորդ օրը այն օրից, երբ Դեպոզիտարին ստացել է վավերացնելու, ընդունելու, հավանություն տալու կամ միանալու մասին փաստաթղթերը, Կոնվենցիայի Կողմերի ամենաքիչը երկու երրորդից, որոնք ուղղումը ընդունելու պահին հանդիսացել են Կողմեր:

5. ՈՒղղումը ուժի մեջ է մտնում ցանկացած այլ Կողմի համար իննսուներորդ օրը այն բանից հետո, երբ տվյալ Կողմը Դեպոզիտարին պահպանության է հանձնում վավերացնելու, ընդունելու, նշված ուղղմանը հավանություն տալու կամ դրան միանալու մասին իր փաստաթուղթը:

6. Այս հոդվածի և հոդված 31-ի նպատակների համար " ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմեր" տերմինը նշանակում է Կողմեր, որոնք ներկա են և քվեարկում են "կողմ" կամ "դեմ":

Հոդված 31

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ ՄՏՑՆԵԼԸ

1. Կոնվենցիայի ցանկացած լրացուցիչ հավելված և այս կամ այն հավելվածին ցանկացած ուղղում առաջարկվում և ընդունվում են Կոնվենցիայում ուղղումներ մտցնելու արարողակարգին համաձայն, որ շարադրված է հոդված 30-ում, պայմանով, որ տարածաշրջանային մակարդակով իրականացնելու մասին լրացուցիչ հավելվածի ընդումնան դեպքում կամ տարածաշրջանային մակարդակով իրականացնելու մասին հավելվածում ուղղում մտցնելու դեպքում ձայների մեծամասնություն այս հոդվածով նախատեսվում է համարել համապատասխան տարածաշրջանի Կողմերից քվեարկությանը ներկա և մասնակցող Կողմերի ձայների երկու երրորդ մեծամասնությունը: Դեպոզիտարին հայտնում է բոլոր Կողմերին հավելվածի ընդունման կամ հավելվածում ուղղում մտցնելու մասին:

2. Կետ 1-ին համաձայն ընդունված հավելվածները, բացառությամբ տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին լրացուցիչ հավելվածներից, կամ հավելվածների ուղղումներից, բացառությամբ տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին ցանկացած հավելվածի ուղղումներից, ուժի մեջ են մտնեում Կոնվենցիայի բոլոր Կողմերի համար Դեպոզիտարիի կողմից այդ Կողմերին այդպիսի հավելվածի կամ այդպիսի ուղղման ընդունման մասին հաղորդելու օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ այն Կողմերի, որոնք այդ ժամանակի ընթացքում գրավոր տեքստով ծանուցել են Դեպոզիտարին այդպիսի հավելվածի կամ դրան վերաբերվող ուղղման իրենց չընդունելու մասին: Այդպիսի հավելվածը կամ ուղղումը ուժի մեջ է մտնում Կողմերի համար, որոնք անվավեր են համարում չընդունելու մասին իրենց ծանուցումը՝ իննսուներորդ օրը Դեպոզիտարիի կողմից այդպիսի ծանուցման անվավեր համարելու մասին հաղորդումը ստանալու օրվանից:

3. Տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին ցանկացած լրացուցիչ հավելված կամ դրան վերաբերվող ցանկացած ուղղում, որոնք ընդունվել են կետ 1-ին համապատասխան, ուժի մեջ են մտնում Կոնվենցիայի բոլոր Կողմերի համար Դեպոզիտարիի կողմից այդպիսի Կողմերին այդ հավելվածը կամ ուղղումը ընդունելու մասին հաղորդման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ.

a) ցանկացած Կողմի, որը այդ վեցամսյա ժամկետի ընթացքում գրավոր տեսքով ծանուցում է Դեպոզիտարիին տարածաշրջանային մակարդակով այդպիսի լրացուցիչ հավելվածը կամ դրան վերաբերվող ուղղումը իր չընդունելու մասին և այդ դեպքում այդպիսի հավելվածը կամ ուղղումը ուժի մեջ է մտնում Կողմերի համար, որոնք անվավեր են համարում չընդունելու մասին իրենց ծանուցումը՝ իննսուներորդ օրը այն օրվանից հետո, երբ Դեպոզիտարին ստանում է այդպիսի ծանուցման անվավեր համարվելու հաղորդումը; և

b) ցանկացած Կողմի, որը հոդված 34-ի կետ 4 -ին համապատասխան հայտարարություն է արել տարածաշրջանային իրականացման համար լրացուցիչ հավելվածի կամ դրան վերաբերվող ուղղման մասին, և այդ դեպքում այդպիսի հավելվածը կամ դրան վերաբերվող ուղղումը այդ Կողմի համար ուժի մեջ է մտնում իննսուներորդ օրը Դեպոզիտարին այդպիսի հավելվածը կամ այդպիսի ուղղումը վավերացնելու,

ընդունելու, հավանություն տալու կամ դրան միանալու մասին իր փաստաթուղթը պահպանության հանձնելուց հետո:

4. Եթե հավելվածի կամ հավելվածի ուղղումի ընդունումը կապված է Կոնվենցիայում ուղղում մտցնելու հետ, ապա այդ հավելվածը կամ հավելվածի այդպիսի ուղղումը ուժի մեջ է մտնում միայն Կոնվենցիայի ուղղումը ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 32

ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայնի իրավունք՝ բացառությամբ կետ 2 -ում նախատեսված դեպքից:

2. Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունները, իրենց իրավասության ոլորտում ընգրկված հարցերում, իրականացնում են իրենց ձայնի իրավունքը՝ ունենալով Կոնվենցիայի Կողմեր հանդիսացող իրենց պետություն - անդամների թվին հավասար ձայների քանակ: Այդպիսի կազմակերպությունները չեն օգտագործում իրենց ձայնի իրավունքը, եթե իրենց պետություն - անդամներից ցանկացածը օգտագործում է իր ձայնի իրավունքը և ընդհակառակն:

ՄԱՍ VI

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33

ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Սույն Կոնվենցիան բացվում է ստորագրման համար, պետությունների - Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամների կամ դրա ցանկացած մասնագիտացված հաստատության կամ պետությունների - Միջազգային Դատարանի Ստատուտի անդամների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից, Փարիզում 1994թ.

հոկտեմբերի 14-15: Հետագայում այն մնում է ստորագրման համար բաց Միացյալ Ազգերի Կազմակերպության Կենտրոնական հաստատություններում՝ Նյու Յորքում մինչև 1995 թ. հոկտեմբերի 13-ը:

Հոդված 34

ՎԱՎԵՐԱՑՈՒՄ, ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻԱՑՈՒՄ

1. Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման, հավանության կամ միացման պետությունների և տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից: Այն բացվում է միացման համար հաջորդ օրը այն օրվանից, երբ Կոնվենցիան փակվում է ստորագրման համար: Վավերացման, ընդունման, հավանության կամ միացման փաստաթղթերը տրվում են պահպանության Դեպոզիտարի:

2. Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային ցանկացած կազմակերպություն, որը դառնում է Կոնվենցիայի Կողմ, այն ժամանակ քանի դեռ իր պետություն - անդամներից ոչ մեկը չի հանդիսանում Կոնվենցայի Կողմ, կապված է Կոնվենցիայից բխող բոլոր պարտականություններից: Այն դեպքում, երբ մեկ կամ ավելի պետություններ - այդպիսի կազմակերպության անդամներ նույնպես հանդիսանում են Կոնվենցիայի Կողմեր, այդ կազմակերպությունը և նրա պետություն - անդամները որոշում են ընդունում իրենց համապատասխան պարտականությունների նկատմամբ Կոնվենցիայից բխող իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ: Այդ դեպքերում կազմակերպությունը և պետություն-անդամները չեն կարող միաժամանակ իրականացնել Կոնվենցիայից բխող իրավունքները:

3. Վավերացման, ընդունման, հավանության և միացման իրենց փաստաթղթերում տնտեսական ինտեգրացիայի տարածաշարջանային կազմակերպությունները հայտարարում են Կոնվենցիայով կարգավորվող հարցերում իրենց իրավասության սահմանների մասին: Նրանք նաև անհապաղ տեղեկացնում են Դեպոզիտարին, որն իր հերթին տեղեկացնում է Կողմերին, իրենց իրավասության սահմանների ցանկացած նշանակալից փոփոխությունների մասին:

4. Վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու իրենց փաստաթղթերում ցանկացած Կողմ կարող է հայտարարել, որ իր նկատմամբ տարածաշրջանային մակարդակով իրականացման մասին ցանկացած լրացուցիչ հավելված կամ տարածաշրջանային մակարդակով իականացման մասին ցանկացած հավելվածի ցանկացած ուղղում ուժի մեջ են մտնում միայն նրա կողմից վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու մասին իր փաստաթուղթը պահպանության հանձնելուց հետո:

Հոդված 35

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հոդված 23-ում նշված քարտուղարական գործառույթները Քարտուղարության կողմից, հիմնադրված Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի կողմից իր 1992թ. դեկտեմբերի 22-ի 47/188 բանաձևով, պետք է իրականացվեն ժամանակավոր հիմունքներով մինչև Կողմերի Կոնֆերանսի առաջին նստաշրջանի ավարտը:

Հոդված 36

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իններորդ օրը վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու մասին հիսուներորդ փաստաթուղթը պահպանության հանձնելուց հետո:

2. Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հավանություն են տալիս Կոնվենցիային կամ միանում են նրան, վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու հիսուներորդ փաստաթուղթը պահպանության հանձնելուց հետո Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իններորդ օրը՝ այդպիսի պետության կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու մասին իր փաստաթուղթը պահպանության հանձնելուց հետո:

3. 1 և 2 կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրացիայի տարածաշարջանային կազմակերպության կողմից պահպանության տրված ոչ մի փաստաթուղթ չի քննարկվում որպես լրացուցիչ այն փաստաթղթերին, որոնք հանձնվել են պահպանության այդ կազմակերպության պետությունների - անդամների կողմից:

Հոդված 37

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

Որևէ վերապահություններ սույն Կոնվենցիային չեն թույլատրվում:

Հոդված 38

ԵԼՔ

1. Ցանկացած ժամանակ այս կամ այն Կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ժամկետից երեք տարի լրանալուց հետո այդ Կողմը կարող է դուրս գալ Կոնվենցիայից՝ ուղարկելով գրավոր ծանուցում Դեպոզիտարի:

2. Ցանկացած այդպիսի ելք ուժի մեջ է մտնում Դեպոզիտարիի կողմից դուրս գալու մասին ծանուցումը ստանալու օրից մեկ տարի լրանալուց հետո կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշված լինել ելքի մասին ծանուցման մեջ:

Հոդված 39

ԴԵՊՈԶԻՏԱՐԻ

Կոնվենցիայի Դեպոզիտարիի գործառույթները կատարում է Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր Քարտուղարը:

Հոդված 40

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐ

Սույն Կոնվենցիայի բնագիրը, որի տեքստերը անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով են, հանդիսանում են հավասար բնագրական, հանձնվում է Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարի պահպանությանը:

Ի ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ ՈՐԻ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով դրանում լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԵԼ Է Փարիզում՝ հազար իննհարյուր իննսունչորս թվականի հունիսի տասնյոթին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1

ԸՆԴԳՐԿՈՒՄ

Տվյալ հավելվածը կիրառվում է Աֆրիկայում յուրաքանչյուր Կողմի նկատմամբ և Կոնվենցիային համապատասխան, և մասնավորապես դրա հոդված 7-ի չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններում անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման նպատակներով:

Հոդված 2

ՆՊԱՏԱԿԸ

Տվյալ հավելվածի նպատակը ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով Աֆրիկայում և դրան հատուկ պայմանների լույսի տակ կայանում է հետևյալում.

a) որոշել միջոցները և պայմանավորվածությունները, այդ թվում զարգացող երկրներից - Կոնվենցիայի Կողմերից, Կոնվենցիայի համապատասխան դրույթներին համաձայն, օգնություն ցուցաբերելու բնույթը և գործընթացը;
b) ապահովել Կոնվենցիայի արդյունավետ և գործնական իրականացումը՝ հաշվի առնելով Աֆրիկայում գոյություն ունեցող հատուկ պայմանները; և
c) աջակցել գործընթացների և միջոցառումների իրականացմանը՝ կապված Աֆրիկայի չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջաններում անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման հետ:

Հոդված 3

ԱՖՐԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Իրենց պարտականությունները կատարելիս Կողմերը, Կոնվենցիային համապատասխան սույն հավելվածի իրականացման ընթացքում հետևում են բազային մոտեցմանը, որը հաշվի է առնում Աֆրիկայի հետևյալ հատուկ պայմանները.

a) մեծ չափերի չոր, կիսաչոր և չոր սուբհումիդ շրջանների առկայությունը;
b) անապատացման բացասական ազդեցությանը և հաճախ կրկնվող դաժան երաշտներին ենթարկված են մայրցամաքի մեծ թվով երկրներ և բնակչության զգալի մասը;
c) մեծ թվով վնասված երկրներ չունեն ելք դեպի ծով;
d) չքավորության լայն մասշտաբները առավել տուժված երկրներում, որոնցում մեծ թիվ են կազմում ամենաքիչ զարգացած երկրները; այդ երկրները, զարգացման ոլորտում, իրենց հարցերը լուծելու համար կարիք են զգում մեծ ծավալի արտաքին օգնության՝ նպաստի և զեղչ պայմաններով փոխառության ձևով;
e) այդ երկրներում ծանր սոցիալ - տնտեսական պայմանների առկայությունը, որը սրվում է առևտրի վատթարացող և փոփոխական պայմաններից, արտաքին պարտքի հիմնախնդիրներից և քաղաքական անկայունությունից, որոնք հանգեցնում են ներքին, տարածաշրջանային և միջազգային միգրացիայի;
f) բնակչության մեծ կախվածությունը բնական ռեսուրսներից որպես գոյության միջոցների աղբյուր, որը զուգակցվելով ժողովրդագրական միտումների և գործոնների, տեխնոլոգիական թույլ բազայի և անարդյունավետ արտադրական փորձի հետ, հանգեցնում է ռեսուրսային բազայի լուրջ դեգրադացիայի;
g) համարժեք կառուցվածքային և իրավական հիմքերի բացակայությունը, թույլ զարգացած ենթակառուցվածքը, գիտա - տեխնիկական և կրթական անբավարար ներուժը պայմանավորում են ներուժի նշանակալից ուժեղացման անհրաժեշտությունը; և
h) անապատացման դեմ պայքարի գործողություններին և/կամ երաշտի հետևանքների մեղմացմանը ուղղված ջանքերին հատկացվում է կենտրոնական տեղ վնասվող աֆրիկական երկրների զարգացման ազգային մյուս գերակայությունների մեջ:

Հոդված 4

ԱՖՐԻԿԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ - ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հաշվի առնելով իրենց համապատասխան հնարավորությունները, աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը պարտավորվում են.

   a) դիտել անապատացման դեմ պայքարը և/կամ երաշտի հետևանքների մեղմացումը, իրենց ջանքերի շրջանակներում, որպես գլխավոր ռազմավարություններից մեկը՝ ուղղված չքավորության արմատապես վերացմանը;
   b) աջակցել տարածաշրջանային համագործակցության զարգացմանը և ինտեգրացիային, համերաշխության և գործընկերակցության ոգով՝ ելնելով փոխադարձ հետաքրքրություններից, անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացմանը ուղղված ծրագրերի և միջոցառումների շրջանակներում;
   c) կատարելագործել և ամրացնել անապատացման և երաշտի հիմնախնդիրներով զբաղվող առկա հաստատությունները, և դրանց գործունեության արդյունավետության բարձրացման ու ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումը ապահովելու համար այդ հիմնախնդիրների լուծմանը ներգրավել, համապատասխան դեպքերում, մյուս առկա հաստատությունները;
   d) օժանդակել համապատասխան տեխնոլոգիաների, գիտելիքների, նոու-հաու և գործնական մեթոդների մասին տեղեկատվության փոխանակմանը տարածաշրջանի երկրների միջև ; և
   e) մշակել արտակարգ պլաններ երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ՝ անապատացման և/կամ երաշտի արդյունքում տուժված շրջաններում:

2. Ի կատարում Կոնվենցիայի 4 և 5 հոդվածներում շարադրված ընդհանուր և կոնկրետ պարտավորությունների՝ վնասվող աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը ձգտում են.

   a) տրամադրել համապատսխան հատկացումներ իրենց ազգային բյուջեների շրջանակներում, հաշվի առնելով ազգային պայմաններն ու հնարավորությունները և նոր գերակայող խնդիրը, որը Կոնվենցիայի համատեքստում Աֆրիկան որոշել է՝ կապված անապատացման և/կամ երաշտի երևույթների հետ;

b) աջակցել և ամրապնդել բարեփոխումները, որոնք ներկայումս իրականացվում են ապակենտրոնացման խորացման, ռեսուրսատնօրինման համակարգի վերանայման, ինչպես նաև տեղական բնակչության և համայնքների մասնակցության ընդարձակման նպատակով; և

c) գտնել և համախմբել նոր և լրացուցիչ ազգային ֆինանսական ռեսուրսներ և գերակայության կարգով ամրապնդել գոյություն ունեցող ազգային ներուժը և մեխանիզմները՝ ներքին ֆինանսական ռեսուրսների համախմբման նպատակով:

Հոդված 5

ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ - ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Իրենց պարտականությունները կատարելիս, Կոնվենցիայի 4, 6 և 7 հոդվածներին համապատասխան, զարգացած երկրները - Կոնվենցիայի Կողմերը առաջնահերթ ուշադրություն են դարձնում վնասվող աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին և այդ համատեքստում.

a) օգնություն են նրանց ցուցաբերում անապատացման դեմ պայքարում և/կամ երաշտի հետևանքների մեղմացման գործում, այդ թվում ֆինանսական և/կամ այլ ռեսուրսներից օգտվելու տրամադրման և/կամ թեթևացան ճանապարհով , ինչպես նաև խրախուսման, ֆինանսավորման և/կամ ֆինանսավորման փոխանցման թեթևացման, համապատասխան էկոլոգիապես ընդունելի տեխնոլոգիաների հարմարեցման և նոու-հաու ճանապարհով և մուտքը դեպի դրանց, փոխհամաձայնեցման հիման վրա և ազգային քաղաքականությանը համապատասխան՝ հաշվի առնելով իրենց կողմից ընդունված չքավորության վերացման գլխավոր ռազմավարություններից մեկը;

b) շարունակում են տրամադրել նշանակալից ռեսուրսներ և/կամ մեծացնել տրամադրվող ռեսուրսների ծավալը՝ անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման նպատակներով; և

c) օգնություն են նրանց ցուցաբերում կառուցվածքային հիմքերի, գիտա - տեխնիկական ներուժի ավելացման, տեղեկատվության հավաքի ու վերլուծության կատարելագործման, հետազոտությունների և մշակումների հնարավորությունների

ընդարձակման համար՝ անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման նպատակով:

2. Մյուս երկրները - Կոնվենցիայի Կողմերը կամավոր հիմունքներով վնասվող աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին կարող են տրամադրել անապատացման հետ կապված տեխնոլոգիա, գիտելիքներ և նոու-հաու և/կամ ֆինանսական ռեսուրսներ: Այդպիսի գիտելիքների, նոու-հաու և մեթոդների փոխանցմանը աջակցում է միջազգային համագործակցությունը:

Հոդված 6

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

1. Գործողությունների ազգային ծրագրերը հանդիսանում են ազգային քաղաքականության մշակման ավելի լայն գործընթացի կենտրոնական և անբաժանելի մասերից մեկը՝ վնասվող աֆրիկական երկրներում - Կոնվենցիայի Կողմերում կայուն զարգացման նպատակով:

2. Ճկուն պլանավորմամբ ռազմավարության մշակման համար, որը թույլ կտա հասնել տեղական բնակչության և համայնքների առավելագույն մասնակցությանը, իրականացվում է խորհրդատվության լայն գործընթաց՝ համապատասխան մակարդակների իշխանության օրգանների, տեղական բնակչության, համայնքների և ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությամբ: Համապատասխան դեպքերում, վնասվող աֆրիկական երկրի - Կոնվենցիայի Կողմի խնդրանքով, այդ գործընթացին կարող են ներգրավվել օգնություն ցուցաբերող երկկողմ և բազմակողմ հաստատությունները:

Հոդված 7

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մինչև տվյալ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ժամանակամիջոցում, վնասվող աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը, համապատասխան դեպքերում, միջազգային հանրության

տարբեր անդամների հետ համագործակցված, ժամանակավորապես ընդունում են , հնարավորության սահմանում, Կոնվենցիայի դրույթները, որոնք վերաբերվում են ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային գործողությունների ծրագրերի նախապատրաստմանը:

Հոդված 8

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Կոնվենցիայի հոդված10-ին համապատասխան ազգային գործողությունների ծրագրերի ընդհանուր ռազմավարությունում կենտրոնական տեղ է հատկացվում վնասվող շրջանների համար զարգացման համալիր տեղական ծրագրերին՝ հիմնված բնակչության մասնակցության ապահովման մեխանիզմների և անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ջանքերում չքավորության վերացման ռազմավարության ընդգրկման վրա: Այդ ծրագրերը նպատակաուղղված են տեղական իշխանությունների ներուժի ամրացմանը և տեղական բնակչության, համայնքների և խմբերի ակտիվ մասնակցության ապահովմանը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով կրթության և նախապատրաստման հարցերին փորձով ապացուցված ոչ կառավարական կազմակերպությունների համախմբմանը և ապակենտրոնացած կառավարական կառույցների ամրացմանը:

2. Համապատասխան դեպքերում ազգային գործողությունների ծրագրերը պարունակում են հետևյալ ընդհանուր դրույթները.

   a) մշակման և ազգային գործողությունների ծրագրերի իրականացման ժամանակ անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման ոլորտում նախկին փորձի օգտագործումը՝ հաշվի առնելով սոցիալական, տնտեսական և էկոլոգիական պայմանները;
   b) անապատացմանը և/կամ երաշտին նպաստող գործոնների բացահայտումը, առկա և պահանջվող ռեսուրսների և հնարավորությունների որոշումը, և համապատասխան ռազմավարության , ինչպես նաև կառուցվածքային և այլ միջոցների մշակումը, որոնք անհրաժեշտ են այդ երևույթների դեմ պայքարելու և/կամ դրանց հետևանքների մեղմացման համար; և

c) տեղական բնակչության և համայնքների, այդ թվում կանանց, հողագործների և անասնապահների մասնակցության ընդլայնումը, և նրանց ավելի լայն լիազորություններ տալը:

3. Ազգային գործողությունների ծրագրերը պատշաճ ձևով նաև նախատեսում են հետևյալը.

a) միջոցներ՝ չքավորությունը վերացնելու նպատակով տնտեսական պայմանները բարելավելու ուղղությամբ.

i) եկամուտների ավելացում և զբաղվածության հնարավորությունների ընդարձակում, հատկապես համայնքի առավել աղքատ անդամների համար, հետևյալ ճանապարհով.

- գյուղատնտեսական և անասնապահական մթերքների շուկաների զարգացման;
- տեղական պահանջներին պատասխանող ֆինանսական լծակների ստեղծման;
- գյուղատնտեսության բազմազանության աջակցման և գյուղատնտեսական ձեռնարկությունների ստեղծման;
- գյուղատնտեսության հետ խառը կամ ոչ գյուղատնտեսական տիպի գործունեության տնտեսական ձևերի զարգացման;

ii) գյուղական էկոնոմիկայի երկարաժամկետ հեռանկարների զարգացման բարելավում՝ ստեղծելով.

- խթաններ՝ արտադրողական ներդրումների և արտադրության միջոցներ ստանալու հնարավորության համար; և
- աճին նպաստող գնային և հարկային միջոցներ և առևտրական փորձ;

iii) որոշել և իրականացնել միջոցներ բնակչության միգրացիայի բնագավառում՝ հողային ռեսուրսների վրա ժողովրդագրական ճնշման պակասեցման նպատակով; և

iv) աջակցել չորադիմացկուն մշակաբույսերի օգտագործմանը և չոր հողերի մշակման համալիր համակարգերի կիրառմանը՝ պարենային անվտանգության ապահովման համար;

b) միջոցներ՝ բնական ռեսուրսները պահպանելու ուղղությամբ.

i) ապահովել բնական ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործումը՝ ընդգրկելով.

- գյուղատնտեսական հողերը և արոտավայրերը;
- բուսածածկը և կենդանական աշխարհը;
- անտառները;
- ջրային ռեսուրսները; և
- կենսաբանական բազմազանությունը;

ii) ուսուցում և բնակչության իրազեկության խորացում, ինչպես նաև լուսավորչական կամպանիաների անցկացում՝ էկոլոգիայի և բնական ռեսուրսների կայուն ու արդյունավետ օգտագործման մեթոդների մասին գիտելիքների տարածման հարցերով; և

iii) ապահովել էներգիայի տարբեր աղբյուրների յուրացումը և արդյունավետ օգտագործումը, նպաստել էներգիայի այլընտրանքային աղբյուրների, մասնավորապես արևային, քամու էներգիայի և կենսագազի օգտագործմանը, ինչպես նաև կոնկրետ միջոցների ընդունումը համապատասխան տեխնոլոգիաների փոխանցման, ձեռք բերման և հարմարեցման ուղղությամբ՝ խոցելի բնական ռեսուրսների վրա ճնշումը նվազեցնելու նպատակով;

c) միջոցներ՝ ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործման ուղղությամբ.

i) որոշել իշխանության կենտրոնական կառավարության և տեղական օրգանների դերն ու պարտականությունները՝ հողօգտագործման պլանավորման քաղաքականության շրջանակներում;

ii) խրախուսել ակտիվ ապակենտրոնացման քաղաքականությունը, որը նպատակ ունի տեղական օրգաններին տալ կառավարման լիազորություններ, և խրախուսել տեղական համայնքների կողմից նախաձեռնության հանդես բերումը ու պատասխանատվության գիտակցումը և տեղական կառույցների ստեղծումը; և

iii) կանոնավորել, համապատասխան դեպքերում, բնական ռեսուրների օգտագործման կառուցվածքային և նորմատիվային հիմքերը՝ տեղական բնակչության հողատիրական իրավունքների երաշխավորման նպատակով;

d) միջոցներ՝ անապատացման պրոցեսները խորացված հասկանալու ուղղությամբ.

i) խրախուսել ուսումնասիրությունները, ինչպես նաև անապատացման գիտա-տեխնիկական և սոցիալ-տնտեսական ասպեկտների մասին տեղեկությունների հավաքը, մշակումը և փոխանակումը;

ii) ավելացնել ազգային ներուժը ուսումնասիրությունների, տեղեկությունների հավաքի, մշակման, փոխանակման և վերլուծության ոլորտում, որպեսզի ապահովել վերլուծության արդյունքների ավելի խորը իմացությունը և արդյունավետ կիրառումը գործնականում; և

iii) խրախուսել միջնաժամկետ և երկարաժամկետ ուսումնասիրությունները.

- վնասվող շրջաններում սոցիալ-տնտեսական և մշակութային միտումները,
- բնական ռեսուրսների ոլորտում որակական և քանակական միտումները, և
- կլիմայի և անապատացման միջև փոխադարձ կապերը; և

e) միջոցներ՝ երաշտի հետևանքների գնահատման և մոնիտորինգի ուղղությամբ.

i) մշակել տարածաշրջանում երաշտի և անապատացման գործընթացների վրա կլիմայի բնական փոփոխականության ազդեցության գնահատման ռազմավարություն և/կամ օգտագործել կլիմայի փոփոխականության սեզոնային և միջտարեկան կանխատեսումները, երաշտի հետևանքների մեղմացման գործողություններում;

ii) կատարելագործել նախազգուշացման և պատասխան միջոցների համակարգերը, ապահովել արտակարգ և պարենային օգնության արդյունավետ կառավարումը և կատարելագործել պարենի պահպանման ու բաշխման համակարգը, անասունների ու ինժեներա-տեխնիկական շինությունների պահպանության համակարգերը, հավասար չափով նաև չոր շրջաններում գոյության միջոցների այլընտրանքային սխեմաները; և

iii) շրջակա միջավայրի վիճակի վատացման մոնիտորինգ և գնահատում՝ ռեսուրսների դեգրադացիայի ընթացքի և դինամիկայի մասին հուսալի և ժամանակին տեղեկատվություն ստանալու նպատակով՝ տեղեկացման և ավելի արդյունավետ քաղաքականության ու պատասխան միջոցների մշակմանը աջակցելու նպատակով:

Հոդված 9

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՀՋ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Յուրաքանչյուր վնասվող աֆրիկական երկիր - Կոնվենցիայի Կողմ նշանակում է համակարգման համապատասխան ազգային օրգան, որը կոչված է կատարելու կատալիզատորի դեր նրա ազգային գործողությունների ծրագրերի նախապատրաստման, իրականացման և գնահատման գործում: Հոդված 3-ի լույսի տակ այդ օրգանը համապատասխան դեպքերում.

a) որոշում և վերլուծում է գործողությունները՝ սկսած տեղական բնակչության և համայնքների մասնակցությամբ տեղերում խորհրդատվության գործընթացի նախաձեռնությունից ու համագործակցությունից և իշխանության տեղական օրգանների, զարգացած երկրների - Կոնվենցիայի Կողմերի, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ ազգային մակարդակով շահագրգիռ կողմերի հետ նախնական խորհրդատվության հիմքի վրա;
b) բացահայտում և վերլուծում է դիմադրող գործոնները, կարիքներն ու պակասությունները, որոնք բացասաբար են անդրադառնում հողօգտագործման զարգացման և կայունության վրա, և խորհուրդ է տալիս գործնական միջոցներ՝ ջանքերի կրկնությունից խուսափելու համար, համապատասխան ընթացիկ միջոցների բացառիկ արդյունավետ օգտագործման և արդյունքների հասնելուն աջակցելու ճանապարհով;
c) խրախուսում, պլանավորում և ձևակերպում է նախագծային միջոցառումներ՝ հիմնված միմյանց փոխադարձաբար լրացնող, ճկուն մոտեցումների վրա, այն հաշվով, որպեսզի ապահովվի վնասվող շրջանների բնակչության ակտիվ մասնակցությունը և նվազագույնի հասցվի այդպիսի միջոցառումների բացասական ազդեցությունը, ինչպես նաև բացահայտում է ֆինանսական օգնության և տեխնիկական համագործակցության կարիքները և որոշում է դրանց հերթականությունը;
d) հաստատում է անհրաժեշտ և քանակական չափումների ու ստուգմանը հեշտ ենթարկվող ցուցանիշները ազգային գործողությունների ծրագրերի բովանդակության գնահատման համար, որոնք նախատեսում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ բնույթի միջոցները, և այդպիսի ծրագրերի իրականացման ընթացքի գնահատականները; և
e) պատրաստում է զեկույցներ ազգային գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքի մասին:

Հոդված 10

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

1. Կոնվենցիայի հոդված 4-ի համաձայն աֆրիկական վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը համագործակցում են Կենտրոնական, Արևելյան, Հյուսիսային, Հարավային և Արևմտյան Աֆրիկայի համար գործողությունների ենթատարածաշրջանային ծրագրերի նախապատրաստման և իրականացման շուրջը և այդ կապակցությամբ կարող են կատարել ենթատարածաշրջանային միջկառավարական կազմակերպություններին համապատասխանող հետևյալ պարտականությունները.

   a) կատարել ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրերի նախապատրաստման և իրականացման համակարգող կենտրոնի դեր;
   b) ցուցաբերել օգնություն ազգային գործողությունների ծրագրերի նախապատրաստմանը և իրականացմանը;
   c) կազմակերպել տեղեկատվության, փորձի և նոու-հաու փոխանակությունը, ինչպես նաև ցուցաբերել խորհրդատվական օգնություն ազգային օրենսդրության վերանայմանը;
   d) ցանկացած այլ պարտականություններ ՝ կապված ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրերի իրականացման հետ:

2. Մասնագիտացած ենթատարածաշրջանային հաստատությունները կարող են ցուցաբերել օգնություն հարցումների ուղղությամբ և/կամ լիազորված լինեն իրականացնելու իրենց հեղինակության ոլորտին վերաբերվող միջոցառումների համակարգումը:

Հոդված 11

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրերի ուշադրության կենտրոնում գտնվում են հարցեր, որոնք կարող են ավելի արդյունավետ լուծվել ենթատարածաշրջանային մակարդակով: Ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրերի շրջանակներում,

անհրաժեշտության դեպքում, ստեղծվում են մեխանիզմներ ընդհանուր բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովման համար: Այդպիսի մեխանիզմները արդյունավետ ձևով լուծում են անդրսահմանային հիմնախնդիրները՝ կապված անապատացման և/կամ երաշտի հետ և օժանդակում են ազգային գործողությունների ծրագրերի ներդաշնակ իրականացմանը: Ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրերը համապատասխան դեպքերում անցկացվում են հետևյալ գերակայող ոլորտներում.

a) անդրսահմանային բնական ռեսուրսների կայուն և արդյունավետ օգտագործման համատեղ ծրագրեր, համապատասխան դեպքերում երկկողմ և բազմակողմ մեխանիզմների օգնությամբ;
b) էներգիայի այլընտրանքային աղբյուրների զարգացման ծրագրերի համակարգում;
c) համագործակցություն վնասատուների, ինչպես նաև բույսերի և կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի ոլորտում և դրանցից պաշտպանվելու գործում;
d) միջոցառումներ ներուժի, կրթության և բնակչության իրազեկության բարձրացման ուղղությամբ, որոնք ավելի արդյունավետ են իրականացվում կամ օժանդակվում ենթատարածաշրջանային մակարդակով;
e) գիտա-տեխնիկական համագործակցություն, մասնավորապես կլիմատոլոգիայի, մետեորոլոգիայի և հիդրոլոգիայի ոլորտներում՝ ընդգրկելով տվյալների հավաքի և գնահատման ցանցերի ստեղծումը, տեղեկատվության փոխանակման և նախագծերի իրականացման վերահսկումը, ինչպես նաև ուսումնասիրությունների և մշակումների գերակայությունների որոշումը և համակարգումը;
f) երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ վաղ նախազգուշացման համակարգեր և միջոցառումների համատեղ պլանավորում՝ ընդգրկելով էկոլոգիական գործոնների հետ կապված միգրացիայի հետևանքով առաջացած հիմնախնդիրների լուծման միջոցները;
g) փորձի փոխանակման հնարավորությունների ուսումնասիրում, հատկապես տեղական բնակչության և համայնքների մասնակցությամբ, և հողօգտագործման պրակտիկայի բարելավման և համապատասխան տեխնոլոգիաների օգտագործման համար բարենպաստ պայմանների ստեղծում;
h) ենթատարածաշրջանային կազմակերպությունների ներուժի ամրացում համակարգման և տեխնիկական սպասարկման տեսանկյունից, ինչպես նաև ենթատարածաշրջանային կենտրոնների և հաստատությունների ստեղծում, վերակողմնորոշում և ամրացում; և

i) միջոցների մշակում այնպիսի ոլորտներում, ինչպիսին առևտուրն է, որոնք ազդեցություն են թողնում վնասվող շրջանների և նրանց բնակչության վրա՝ ընդգրկելով միջոցներ տարածաշրջանային շուկայական ռեժիմների համակարգման և ընդհանուր ենթակառույցների ստեղծման ուղղությամբ:

Հոդված 12

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

1. Կոնվենցիայի հոդված 11-ին համապատասխան աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը համատեղ որոշում են տարածաշրջանային գործողությունների ծրագրերի նախապատրաստման և իրականացման արարողակարգերը:

2. Կոնվենցիայի Կողմերը կարող են ցուցաբերել պատշաճ օժանդակություն համապատասխան աֆրիկական տարածաշրջանային հաստատություններին և կազմակերպություններին, այն հաշվով, որպեսզի դրանք կարողանան օժանդակել աֆրիկական երկրներին - Կողմերին Կոնվենցիայից բխող պարտավորությունները կատարելիս:

Հոդված 13

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման հետ կապված տարածաշրջանային գործողությունների ծրագրերը իրենց մեջ ընդգրկում են միջոցներ հետևյալ գերակայող ոլորտներում.

a) տարածաշրջանային համագործակցության զարգացում և ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրերի համակարգում, քաղաքականության առանցքային հարցերի ուղղությամբ տարածաշրջանային համաձայնության հասնելու նպատակով, այդ թվում ենթատարածաշրջանային կազմակերպությունների միջև կանոնավոր խարհրդատվության անցկացման ուղիով;

b) օժանդակում ներուժի մեծացմանը գործունեության այն ոլորտներում, որոնք ավելի հարմար են տարածաշրջանային մակարդակով իրականացնելու համար;

c) միջազգային հանրության հետ համագործակցելիս գլոբալ տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների լուծումների որոնում, որոնք ազդեցություն են թողնում վնասվող շրջանների վրա, հաշվի առնելով Կոնվենցիայի հոդված 4-ի 2 բ) ենթակետը;

d) աֆրիկական վնասվող երկրների - Կոնվենցիայի Կողմերի և նրանց համապատասխան ենթատարածքային և այլ վնասվող շրջանների միջև տեղեկատվության, և պատշաճ մեթոդներով, տեխնիկական նոու-հաու և համապատասխան փորձի կազմակերպում;

e) գիտական և տեխնոլոգիական համագործակցության զարգացում, հատկապես կլիմատոլոգիայի, մետեորոլոգիայի, հիդրոլոգիայի, ջրային ռեսուրսների և էներգիայի այլընտրանքային աղբյուրների յուրացման ոլորտներում;

f) հետազոտական գործունեության համակարգում ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով; և ուսումնասիրությունների ու մշակումների ոլորտում տարածաշրջանային գերակայությունների որոշում;

g) կանոնավոր դիտարկումների, գնահատման և տեղեկատվության փոխանակման ցանցերի համակարգում, ինչպես նաև նրանց միացում համաշխարհային ցանցերին; և

h) վաղ նախազգուշացման համակարգի և երաշտի դեպքում արտակարգ պլանների արդյունավետության բարձրացում:

Հոդված 14

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Կոնվենցիայի հոդված 2-ին և սույն հավելվածի հոդված 4-ի կետ 2-ին համապատասխան վնասվող աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը ջանքեր են գործադրում ֆինանսական ռեսուրսների համախմբանը օժանդակող մակրոտնտեսական պայմանների ստեղծման համար, և տեղական զարգացման ծրագրերի կարիքների ուղղությամբ ռեսուրսների ավելի արդյունավետ նպատակառուղղման համար մշակում են քաղաքականությունը և հաստատում են արարողակարգեր՝ այդ թվում համապատասխան դեպքերում ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով:

2. Կոնվենցիայի հոդված 21-ի կետեր 4 և 5-ին համապատասխան Կողմերը պայմանավորվում են ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով ֆինանսական աղբյուրների ցանկի կազմման մասին՝

համապատասխան ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ապահովելու և ռեսուրսների բաշխման ժամանակ թերությունները բացահայտելու համար՝ գործողությունների ծրագրերի իրականացումը թեթևացնելու նպատակով: Այդ ցանկը կանոնավոր կերպով վերանայվում է և նորոգվում:

3. Կոնվենցիայի կետ 7-ին համապատասխան զարգացած երկրները - Կոնվենցիայի Կողմերը շարունակում են տրամադրել նշանակալից ռեսուրսներ և/կամ ռեսուրսների ավելի զգալի ծավալներ, ինչպես նաև օգնության այլ ձևեր վնասված աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին համաձայնագրերի և ընկերակցության մասին պայմանավորվածության հիման վրա, որոնց մասին նշվում է հոդված 18-ում, մասնավորապես պատշաճ ուշադրություն դարձնելով հարցերին, որոնք Կոնվենցիայի հոդված 4-ի 2 բ) կետին համապատասխան վերաբերվում են պարտքերին, միջազգային առևտրին և առևտրային ռեժիմներին:

Հոդված 15

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Կոնվենցիայի հոդված 7-ի դրույթներին համապատասխան և հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի հատուկ իրադրությունը, Կոնվենցիայի Կողմերը հատուկ ուշադրություն են դարձնում Աֆրիկայում Կոնվենցիայի հոդված 21-ի 1 դ) և 1 ե) ենթակետերի դրույթների իրականացմանը՝ կապված օգնության հետ, մասնավորապես.

   a) մեխանիզմների ստեղծման թեթևացմանը, այնպիսիք ինչպիսիք են անապատացման դեմ պայքարի համար ազգային հիմնադրամները, որոնք ապահովում են ֆինանսական ռեսուրսների նպատակաուղղումը տեղական համայնքների մակարդակների վրա; և
   b) գոյություն ունեցող հիմնադրամների և ֆինանսական մեխանիզմների ամրացմանը ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդամներով:

2. Կոնվենցիայի հոդվածներ 20 և 21-ին համապատասխան Կողմերը, որոնք նաև հանդիսանում են համապատասխան տարածաշրջանային և ենթատարածաշրջանային ֆինանսական հաստատությունների կառավարող խորհուրդների անդամներ, այդ թվում զարգացման Աֆրիկական բանկի և զարգացման Աֆրիկական հիմնադրամի, օժանդակում

են այն ջանքերին, որոնք ուղղված են պատշաճ նշանակության և պատշաճ ուշադրության արժանացնելու այդ հաստատությունների այն գործունեությանը, որը նպաստում է տվյալ հավելվածի իրականացմանը:

3. Կոնվենցիայի Կողմերը, հնարավորության սահմաններում, արդյունավետացնում են վնասված աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին միջոցներ տրամադրելու արարողակարգերը:

Հոդված 16

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կողմերը հաշվի առնելով իրենց համապատասխան հնարավորությունները պարտավորվում են ձեռնարկել միջոցներ տեխնիկական օգնության կատարելագործման ու ընդարձակման համար աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին և նրանց հետ համագործակցության համար, ծրագրերի և նախագծերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, այդ դեպքում ապահովելով, մասնավորապես, որպեսզի.

a) ծախսերը, որոնք տրամադրվում են օժանդակման և օգնության միջոցներին, հատկապես վրադիր ծախսերը, սահմանափակվեն ծրագրի առավելագույն արդյունավետությունը ապահովելու մակարդակով: Ցանկացած դեպքում այդպիսի ծախսերը պետք է կազմեն նախագծի ընդհանուր արժեքի միայն համապատասխան ոչ մեծ տոկոսը;
b) նախագծի պլանավորման, նախապատրաստման և իրականացման ընթացքում առաջնահերթություն տրվի ազգային փորձագետներին կամ, երբ դա անհրաժեշտ է, ենթատարածաշրջանի և տարածաշրջանի երկրների փորձագետներին, ինչպես նաև, նրանց բացակայության դեպքում, տեղական մասնագետների պատրաստմանը; և
c) տեխնիկական օգնության կառավարումը և համակարգումը, ինչպես նաև օգտագործումը իրականացվեն արդյունավետ ձևով:

Հոդված 17

ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ, ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կոնվենցիայի հոդված 18-ի դրույթները իրականացնելիս տեխնոլոգիաների փոխանցման, ձեռք բերման, հարմարեցման և մշակման վերաբերյալ Կողմերը պարտավորվում են ցուցաբերել առաջնահերթ ուշադրություն աֆրիկական երկրներին - Կոնվենցիայի Կողմերին և, երբ դա անհրաժեշտ է, մշակել նրանց հետ համատեղ ընկերակցության և համագործակցության նոր մոդելներ գիտական ուսումնասիրությունների և մշակումների, տեղեկատվության հավաքի և տարածման ոլորտներում ներուժի ավելացման նպատակով, որ անհրաժեշտ է անապատացման և երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ դրանց ռազմավարությունների իրականացման համար:

Հոդված 18

ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

1. Աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը համակարգում են գործողությունների ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային ծրագրերի նախապատրաստումը, քննարկումն ու իրականացումը: Նրանք կարող են պատշաճ ձևով այդ գործընթացի մեջ ներգրավել տարբեր Կողմերի և համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների:

2. Այդպիսի համակարգման նպատակը կայանում է նրանում, որպեսզի ֆինանսական և տեխնիկական համագործակցությունը իրականացվի Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, ինչպես նաև ապահովվի անհրաժեշտ հաջորդականությունը ռեսուրսների օգտագործման և տեղաբաշխման ոլորտում:

3. Աֆրիկական երկրները - Կոնվենցիայի Կողմերը ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով կազմակերպում են խորհրդատվության գործընթացները: Խորհրդատվության այդ գործընթացները կարող են.

a) ծառայել որպես ներկայացուցչական ժողով ընկերակցության մասին համաձայնագրերի քննարկման և կազմման համար՝ հիմնված ենթատարածաշրջանային և տարածաշրջանային ազգային գործողությունների ծրագրերի վրա; և
b) որոշել աֆրիկական երկրների - Կոնվենցիայի Կողմերի և խորհրդատվական խմբերի այլ անդամների ներդրումը ծրագրերում և որոշել գերակայությունները և քննարկել համաձայնագրերը իրականացման չափանիշների և գնահատման տեսանկյունից, ինչպես նաև իրականացման գործընթացի ֆինանսավորման պայմանները:

4. Ի կատարում Կոնվենցիայի հոդված 23-ի Մշտական քարտուղարությունը, աֆրիկական երկրների - Կոնվենցիայի Կողմերի խնդրանքով, կարող է նպաստել խորհրդատվության այդպիսի գործընթացի կազմակերպմանը հետևյալ ձևով.

a) տրամադրելով խորհրդատվություն միջոցառումների անցկացման վերաբերյալ խորհրդատվության գործընթացի արդյունավետության ապահովման համար՝ ելնելով ուրիշ այդպիսի միջոցառումների անցկացման փորձից;
b) տրամադրելով տեղեկատվություն համապատասխան երկկողմ և բազմակողմ հաստատություններին խորհրդատվական խորհրդակցությունների կամ խորհրդատվական գործընթացների վերաբերյալ և խրախուսել դրանց ակտիվ մասնակցությունը; և
c) տրամադրելով այլ խորհրդատվություն, որը կարող է լինել վերջինը, խորհրդակցություն անցկացնելու համար տարվող միջոցառումների կազմակերպման և կատարելագործման համար:

5. Ենթատարածաշրջանային և տարածաշարջանային համակարգող օրգաններ, մասնավորապես.

a) խորհուրդ են տալիս մտցնել համապատասխան ուղղումներ ընկերակցության մասին համաձայնագրերում;
b) ապահովում են ենթատարածաշրջանային ու տարածաշրջանային հաստատված ծրագրերի իրականացման գործընթացի ստուգումը և գնահատումը և ներկայացնում են զեկույց այդ հարցի վերաբերյալ; և

c) հասնում են աֆրիկական երկրների - Կոնվենցիայի Կողմերի միջև արդյունավետ կապի և համագործակցության ապահովմանը:

6. Մասնակցությունը խորհրդատվական խմբերում, կապված հանգամանքների հետ, բաց է կառավարությունների, շահագրգիռ խմբերի և դոնորների, համապատասխան օրգանների, Միացյալ Ազգերի Կազմակերպության համակարգի հիմնադրամների և ծրագրերի, համապատասխան ենթատարածաշրջանային և տարածաշրջանային կազմակերպությունների և համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների համար: Ամեն մի խորհրդատվական խմբի մասնակիցները որոշում են իրենց խմբի կառավարման և գործունեության պայմանները:

7. Ի կատարումն Կոնվենցիայի հոդված 14-ի Կոնվենցիայի Կողմերի զարգացած երկրները իրենց սեփական նախաձեռնությամբ կարող են զարգացնել ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով խորհրդատվության և իրենց գործունեության համակարգման ոչ պաշտոնական գործընթաց, և այս կամ այլ վնասված աֆրիկական երկրի Կոնվենցիայի Կողմի կամ համապատասխան ենթատարածաշրջանային կամ տարածաշրջանային կազմակերպության խնդրանքով մասնակցել ազգային, ենթատարածաշրջանային կամ տարածաշրջանային խորհրդատվական գործընթացին, որը կարող է ընդգրկել օգնության կարիքների գնահատումը՝ այդպիսի կարիքների իրականացմանը աջակցելու և դրանց արձագանքելու նպատակով:

Հոդված 19

ՀԱՋՈՐԴՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Տվյալ հավելվածի հաջորդական իրականացումը անց է կացվում աֆրիկական երկրների - Կոնվենցիայի Կողմերի կողմից Կոնվենցիայի համաձայն հետևյալ ձևով.

a) ազգային մակարդակով - մեխանիզմի միջոցով, որի կազմը որոշվում է յուրաքանչյուր վնասվող աֆրիկական երկրի - Կոնվենցիայի Կողմի կողմից և որը կազմված է տեղական համայնքների ներկայացուցիչներից և գործում է հոդված 9-ում նշված համակարգման ազգային օրգանի ղեկավարությամբ;

b) ենթատարածաշրջանային մակարդակով - բազմաառարկայական գիտա-տեխնիկական խորհրդատվական կոմիտեի միջոցով, որի կազմը և գործունեության արարողակարգերը որոշվում են համապատասխան ենթատարածաշրջանով; և

c) տարածաշրջանային մակարդակով - մեխանիզմների միջոցով , որոնք որոշված են Աֆրիկական տնտեսական ընկերության ստեղծման մասին Պայմանագրի համապատասխան դրույթների համաձայն, և Աֆրիկական գիտա - տեխնիակական խորհրդատվական կոմիտեի միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1

ՆՊԱՏԱԿԸ

Տվյալ հավելվածի նպատակն է ասիական տարածաշրջանի վնասված երկրներում - Կոնվենցիայի Կողմերում՝ հաշվի առնելով տարածաշրջանի հատուկ պայմանները, ապահովել կառավարող սկզբունքները և ստեղծել պայմաններ Կոնվենցիայի գործնական և արդյունավետ իրականացման համար:

Հոդված 2

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Իրենց պարտականությունները կատարելիս Կողմերը, Կոնվենցիայի դրույթների համաձայն, համապատասխան դեպքերում ուշադրություն են դարձնում տարածաշրջանային վնասված երկրների - Կոնվենցիայի Կողմերի համար, տարբեր չափով բնորոշ հետևյալ հատուկ պայմաններին.

a) այդ երկրների տարածքների մեծ մասը գտնվում է այն շրջաններում, որոնք ենթարկվում են անապատացման կամ երաշտի կամ գտնվում են նրանց սպառնալիքի տակ, ընդ որում այդ շրջանները շատ բազմազան են կլիմայի, տոպոգրաֆիկ բնութագրման, հողօգտագործման սխեմաների և սոցիալ-տնտեսական համակարգերի առումով;

b) բնական ռեսուրսների ինտենսիվ շահագործումը գոյության միջոցների ապահովման համար;

c) արտադրության գոյություն ունեցող անկայուն համակարգերը՝ կապված անմիջապես ամենուր առկա չքավորության հետ, որը տանում է հողերի դեգրադացիայի և առանց այն էլ աղքատ ջրային ռեսուրսների շահագործման ուժեղացմանը;

d) երկրների զգալի կախվածությունը համաշխարհային տնտեսական իրադրությունից և սոցիալական հիմնախնդիրների սրությունը, այնպիսիք ինչպիսիք են չքավորությունը, բնակչության առողջության և սննդի անբավարար վիճակը, պարենային անվտանգության բացակայությունը, միգրացիան, տեղափոխված անձինք և ժողովրդագրական աճը;

e) այդ երկրների ուժ հավաքող, սակայն դեռ ոչ բավարար ներուժը և կառուցվածքային մեխանիզմները, անապատացման և երաշտի ազգային հիմնախնդիրների լուծման ոլորտում; և

f) այդ երկրների միջազգային համագործակցության կարիքը՝ կապված անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման հետ կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:

Հոդված 3

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

1. Ազգային գործողությունների ծրագրերը հանդիսանում են տարածաշրջանի վնասվող երկրների - Կոնվենցիայի Կողմերի կայուն զարգացման ավելի լայն ազգային քաղաքականության անբաժանելի մասը:

2. Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը, համապատասխան դեպքերում Կոնվենցիայի հոդվածներ 9 - 11-ին համապատասխան մշակում են ազգային գործողությունների ծրագրեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոդված 10-ի 2 զ) ենթակետին: Այդ գործընթացին համապատասխան վնասվող երկրի - Կոնվենցիայի Կողմի հարցապնդմամբ, կարող են մասնակցություն ունենալ համապատասխան դեպքերում երկկողմ և բազմակողմ համագործակցության հարցերով զբաղվող հաստատությունները:

Հոդված 4

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Ազգային գործողությունների ծրագրերի նախապատրաստման և իրականացման ընթացքում տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը իրենց կոնկրետ պայմանների և քաղաքականության համաձայն, մասնավորապես, համապատասխան դեպքերում կարող են.

a) նշանակել իրենց գործողությունների ծրագրերի նախապատրաստման, համակարգման և իրականացման համար պատասխանատվություն կրող համապատասխան օրգաններ;

b) գրավել վնասվող բնակչությանը, ընդգրկելով տեղական համայնքները ծրագրերի մշակմանը, համակարգմանը և իրականացմանը՝ խորհրդատվության գործընթացից սկսվող նախաձեռնությամբ իշխանության տեղական օրգանների և համապատասխան ազգային և ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցության միջոցով;

c) անցկացնել շրջակա միջավայրի վիճակի վերլուծություն վնասվող շրջաններում, անապատացման պատճառների և հետևանքների գնահատման նպատակով և գործողությունների առաջնահերթ ոլորտները որոշելու համար;

d) անցկացնել գնահատում անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման անցյալ և ընթացիկ ծրագրերին մասնակից վնասված բնակչության հետ՝ իրենց գործողությունների շրջանակներում ռազմավարության և միջոցառումների մշակման նպատակով;

e) մշակել տեխնիկական և ֆինանսական ծրագրեր ա) - դ) ենթակետերում նշված միջոցառումների անցկացման արդյունքում ստացված տեղեկատվության օգտագործման հիման վրա;

f) մշակել և օգտագործել արարողակարգեր և չափանիշներ իրենց գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման համար;

g) օժանդակել ջրհավաք ավազանների համալիր օգտագործմանը, հողային ռեսուրսների պահպանությանը, ջրային ռեսուրսների յուրացմանը և արդյունավետ օգտագործմանը;

h) տեղեկատվության գնահատման, դիտումների և վաղ նախազգուշացման ցանցերի ամրացում և/կամ ստեղծում անապատացման և երաշտի ենթարկվող շրջաններում՝ հաշվի առնելով կլիմատոլոգիական, մետեորոլոգիական, հիդրոլոգիական, կենսաբանական և տարբեր համապատասխան գործոնները; և

i) միջազգային համագործակցության ընթացքում, ընդգրկելով ֆինանսական և տեխնիկական օգնությունը, ընկերակցության ոգով մշակել իրենց գործողությունների ծրագրերի իրականացմանը աջակցող համապատասխան համաձայնագրեր:

2. Կոնվենցիայի հոդված 10-ին համապատասխան ազգային ծրագրերի ընդհանուր ռազմավարության մեջ գլխավոր տեղ է հատկացվում վնասվող շրջանների տեղական զարգացման համալիր ծրագրերին՝ հիմնված մասնակցության մեխանիզմների և ռազմավարությունների ընդգրկման վրա՝ ուղղված չքավորության վերացման, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման ջանքերին: Հաշվի առնելով տարածաշրջանի վնասվող շրջանների մեծ բազմազանությունը, որի մասին խոսվում է հոդված 2-ի ա) կետում, սեկտորային միջոցները խմբավորվում են գործողությունների ծրագրերի շրջանակներում ըստ առաջնահերթ ոլորտների:

Հոդված 5

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Կոնվենցիայի հոդված 11-ին համապատասխան, Ասիայում գտնվող վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը կարող են համատեղ պայմանավորվել մյուս Կողմերի հետ խորհրդատվության և համագործակցության անցկացման մասին, ինչպես նաև համապատասխան դեպքերում ենթատարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրերի նախապատրաստման և իրականացման մասին, ազգային գործողությունների ծրագրերի լրացման և արդյունավետության բարձրացման համար: Ցանկացած դեպքում համապատասխան Կողմերը կարող են համատեղ պայմանավորվել այն մասին, որպեսզի ենթատարածաշրջանային, այդ թվում երկկողմ կամ ազգային կազմակերպությունների կամ մասնագիտացված հաստատությունների վրա դնեն պարտականություններ՝ կապված ծրագրերի նախապատրաստման, համակարգման և իրականացման հետ: Այդպիսի կազմակերպությունները կամ հաստատությունները, Կոնվենցիայի հոդվածներ 16-18-ին համապատասխան, կարող են կատարել նաև համակարգող օրգանների և կենտրոնների պարտականություններ տեխնիկական համագործակցությունը խրախուսելու և համակարգելու ուղղությամբ:

2. Ենթատարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրեր նախապատրաստելիս և իրականացնելիս տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը ընդունում են, մասնավորապես, համապատասխան դեպքերում հետևյալ միջոցները.

a) որոշում են ազգային հաստատությունների հետ համագործակցելով անապատացման և երաշտի դեմ պայքարի ոլորտում գերակայող խնդիրները, որոնք կարող են լավագույն ձևով լուծվել այնպիսի ծրագրերի օգնությամբ, ինչպես նաև համապատասխան միջոցառումները, որոնք կարող են արդյունավետ իրականացվել այդպիսի ծրագրերի շրջանակներում;
b) գնահատում են գործարար հնարավորությունները և համապատասխան տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և ազգային հաստատությունների գործունեությունը;
c) վերլուծում են անապատացման և երաշտի դեմ պայքարի գոյություն ունեցող ծրագրերը, որոնք իրականացվում են տարածաշրջանի կամ ենթատարածաշրջանի բոլոր կամ մի քանի Կողմերի կողմից, և դրանց փոխադարձ կապը ազգային ծրագրերի հետ; և
d) միջազգային համագործակցության ընթացքում, ընդգրկելով ֆինանսական և տեխնիկական օգնության ցուցաբերումը, ընկերակցության ոգով մշակում են համապատասխան երկկողմ և/կամ բազմակողմ համաձայնագրեր՝ ծրագրերին աջակցելու նպատակով:

3. Ենթատարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրերը կարող են իրենց մեջ ընդգրկել համաձայնեցված համատեղ ծրագրեր, անապատացման և երաշտի դեմ պայքարի շրջանակներում, անդրսահմանային բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ, համակարգման գերակայող խնդիրներ և այլ միջոցառումներ, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ներուժի ավելացումը, գիտա-տեխնիկական համագործակցությունը, հատկապես երաշտի վաղ նախազգուշացման և տեղեկատվության համակարգերի համատեղ օգտագործման գործում, և միջոցառումներ ներուժի ամրապնդման կամ համապատասխան ենթատարածաշրջանային և այլ կազմակերպությունների կամ հաստատությունների համագործակցության հնարավորությունների ընդարձակման ուղղությամբ:

Հոդված 6

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տարածաշրջանային միջոցառումները, որոնք աջակցում են Ենթատարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրերին, կարող են իրենց մեջ ներառել, մասնավորապես, միջոցներ՝ ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով հաստատությունների և համակարգող մեխանիզմների ամրապնդման ուղղությամբ և միջոցներ՝ աջակցելու Կոնվենցիայի հոդվածներ 16-19-ի իրականացմանը: Այդ միջոցառումները իրենց մեջ կարող են ընդգրկել.

a) աջակցություն տեխնիկական համագործակցության ցանցերի գործունեությանը և դրանց ամրացմանը;
b) տեխնոլոգիաների ցանկերի, գիտելիքների, նոու-հաու և գործնական մեթոդների, ինչպես նաև ավանդական և տեղական տեխնոլոգիաների և նոու-հաու նախապատրաստում և դրանց տարածման ու օգտագործման խրախուսում;
c) տեխնոլոգիաների փոխանցման կարիքների գնահատում և աջակցություն այդպիսի տեխնոլոգիաների հարմարեցմանը և օգտագործմանը; և
d) հասարակության տեղեկատվական ծրագրերի խրախուսում և աջակցության ցուցաբերում ներուժի մեծացմանը բոլոր մակարդակներով, մասնագիտական նախապատրաստման, ուսումնասիրությունների և մշակումների զարգացում և մարդկային ռեսուրսների զարգացման համակարգի ստեղծում:

Հոդված 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Կողմերը, հաշվի առնելով Ասիական տարածաշրջանում անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման կարևորությունը, աջակցում են նշանակլից ֆինանսական ռեսուրսների համախմբմանը և ֆինանսական մեխանիզմների ձևավորմանը Կոնվենցիայի հոդվածներ 20 և 21-ի դրույթներին համապատասխան:

2. Կոնվենցիային համապատասխան և հոդված 8-ում նախատեսված համակարգման մեխանիզմի հիման վրա, ինչպես նաև իրենց ազգային զարգացման քաղաքականությանը

համապատասխան, տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը անհատական կամ համատեղ.

a) ձեռնարկում են միջոցներ պետական կամ մասնավոր ներդրումների ձևով ֆինանսավորման մեխանիզմների արդյունավետացման և ամրապնդման ուղղությամբ, անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործում կոնկրետ արդյունքմերի հասնելու նպատակներով;
b) որոշում են կարիքները միջազգային համագործակցության ուղղությամբ, ազգային ջանքերին աջակցելու համար, մասնավոապես, ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական ոլորտներում; և
c) աջակցում են ֆինանսական համագործակցությանը երկկողմ և/կամ բազմակողմ հաստատությունների մասնակցությունը Կոնվենցիայի իրականացման նպատակներով:

2. Կողմերը առավելագույն հնարավոր չափով ապահովում են այդ տարածաշրջանի վնասվող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին, միջոցների տրամադրման արարողակարգերի պարզեցումը:

Հոդված 8

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը հոդված 4-ի ա) կետի համաձայն նշանակված համապատասխան օրգանների միջոցով, և տարածաշրջանի մյուս երկրները - Կոնվենցիայի Կողմերը կարող են համապատասխան ձևով ստեղծել մեխանիզմ, մասնավորապես, հետևյալ ֆունկցիաների կատարման համար.

a) տեղեկատվության, փորձի, գիտելիքների և նոու-հաու փոխանակում;
b) գործողությունների համագործակցություն և համակարգում ՝ ընդգրկելով երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը ենթատարածաշրջանային և տարածաշրջանային մակարդակներով;
c) աջակցություն գիտա-տեխնիկական, տեխնոլոգիական և ֆինանասական համագործակցության զարգացմանը հոդվածներ 5 - 7- ին համապատասխան;

d) կարիքների որոշում ներքին կազմակերպությունների հետ համագործակցելիս; և

e) հաջորդող միջոցառումների անցկացում և գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքի գնահատում:

2. Վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը, համապատասխան օրգանների միջոցով, նշանակված հոդված 4-ի 1 ա) կետի համաձայն, և տարածաշրջանի մյուս երկրները - Կոնվենցիայի Կողմերը նույնպես կարող են համապատասխան ձևով անցկացնել խորհրդատվություններ և համակարգում ազգային, ենթատարածաշրջանային և համատեղ գործողությունների ծրագրերի ուղղությամբ: Համապատասխան դեպքերում նրանք կարող են այդ գործընթացին ներգրավել Կոնվենցիայի մյուս Կողմերին և հարկ եղած միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին: Այդպիսի համակարգման նպատակը կայանում է, մասնավորապես, միջազգային համագործակցության հնարավորությունների ուղղությամբ համաձայնության հասնելու՝ Կոնվենցիայի հոդվածներ 20 և 21-ին համապատասխան, տեխնիկական համագործակցության ընդարձակման և ռեսուրսների համապատասխան բաշխման ապահովման՝ նրանց արդյունավետ օգտագործման նպատակներով:

3. Տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը պարբերաբար անցկացնում են համակարգող խորհրդակցություններ, իսկ Մշտական քարտուղարությունը իրենց խնդրանքով Կոնվենցիայի հոդված 23-ին համապատասխան կարող է աջակցել այդպիսի համակարգող խորհրդատվությունների անցկացմանը հետևյալ ձևով.

a) խորհրդատվություն տալով արդյունավետ համակարգում ապահովելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների կազմակերպման վերաբերյալ՝ ելնելով ուրիշ նման միջոցառումների անցկացման փորձից;

b) տեղեկատվություն տալով համապատասխան երկկողմ և բազմակողմ հաստատություններին, համակարգող խորհրդակցությունների վերաբերյալ և խրախուսելով դրանց ակտիվ մասնակցությունը; և

c) ուրիշ այլ տեղեկատվություն տալով, որը կարող է օգտակար լինել համակարգման գործընթացի իրականացման կամ կատարելագործման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՀԱՎԵԼՎԱԾ ՝ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԻԲՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1

ՆՊԱՏԱԿԸ

Տվյալ հավելվածի նպատակն է Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տարածաշրջանում ՝ հաշվի առնելով դրա հատուկ պայմանները, ապահովել կառավարող սկզբունքները Կոնվենցիայի իրականացման համար:

Հոդված 2

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԻԲՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կողմերը, Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, հաշվի են առնում տարածաշրջանի հետևյալ հատուկ պայմանները.

a) տարածաշրջանում առկա են անապատացման և/կամ երաշտի ենթարկված և լրջորեն տառապող ընդարձակ շրջաններ, որոնց հատուկ է տարածագում բնութագրեր, պայմանավորված համապատասխան շրջանների առանձնահատկություններով; այդ ուժ և մասշտաբներ հավաքող գործընթացը ունի բացասական սոցիալական, մշակութային, տնտեսական և էկոլոգիական հետևանքներ, ընդ որում այդպիսի ազդեցության բացասական բնույթը ավելի է խորանում նրանով, որ տարածաշրջանը պատկանում է կենսաբանական բազմազանության հիմնական համաշխարհային պահուստների թվին;
b) հիմնախնդրի առավել կարևոր պատճառը թաքնված է զարգացման անկայուն մոդելների հաճախակի օգտագործման մեջ, որոնք հանդիսանում են ֆիզիկական,

կենսաբանական, քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների բարդ փոխներգործության արդյունք, այդ թվում այնպիսի արտաքին տնտեսական գործոնների, ինչպիսիք են արտաքին պարտքը, առևտրի պայմանների վատացումը և առևտրային պրակտիկան, որը բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական, ձկնային և անտառային մթերքների շուկաների վիճակի վրա; և

c) անապատացման և երաշտի առավել լուրջ հետևանքների թվին է պատկանում էկոհամակարգերի արտադրողականության կտրուկ անկումը, որը արտահայտվում է հողագործական, անասնապահական, անտառտնտեսական գործունեությունից ստացվող եկամուտի պակասեցմամբ, ինչպես նաև կենսաբանական բազմազանության կրճատմամբ; սոցիալական տեսանկյունից այդ երևույթը հանդիսանում է աղքատացման ընթացքի, միգրացիայի, ներքին տեղափոխությունների, բնակչության կյանքի որակի վատացման աղբյուր; այդ տեսակետից տարածաշրջանը անհրաժեշտ է կիրառի համալիր մոտեցում անապատացման և երաշտի հետ կապված հիմնախնդիրները լուծելիս՝ խրախուսելով յուրաքանչյուր երկրի էկոլոգիական, տնտեսական և սոցիալական իրավիճակը հաշվի առնող զարգացման կայուն մոդելների կիրառումը:

Հոդված 3

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Կոնվենցիայի և մասնավորապես նրա հոդվածներ 9 - 11-ի համաձայն և հաշվի առնելով զարգացման ոլորտում իր ազգային քաղաքականությունը տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը պատշաճ ձևով մշակում և իրականացնում են ազգային գործողությունների ծրագրեր՝ ուղղված անապատացման դեմ պայքարին և երաշտի հետևանքների մեղմացմանը, որպես կայուն զարգացման իրենց ազգային քաղաքականության անբաժանելի մասը: Տարածաշրջանի կարիքների պահանջների հետ կապված կարող են մշակվել և իրագործվել ենթատարածաշրջանային և տարածաշրջանային ծրագրեր:

2. Ազգային գործողությունների իրենց ծրագրերը նախապատրաստելիս տարածաշրջանի վնասվող երկրները - Կովնենցիայի Կողմերը հատուկ ուշադրություն են դարձնում Կոնվենցիայի հոդված 10-ի 2 զ) ենթակետին:

Հոդված 4

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրենց համապատասխան պայմանների լույսի տակ տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը Կոնվենցիայի հոդված 5-ի համաձայն, անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ գործողությունների իրենց ազգային ռազմավարությունները մշակելիս կարող են, մասնավորապես, հաշվի առնել հետևյալ հնարավոր թեմաները.

a) ներուժի ավելացում, կրթության համակարգի և հասարակության իրազեկության կատարելագործում, գիտա-տեխնիկական և տեխնոլոգիական համագործակցության զարգացում, ինչպես նաև օժանդակություն ֆինանսական ռեսուրսների մեծացմանը և ֆինանսավորման մեխանիզմների ամրապնդում;
b) չքավորության վերացում և կյանքի որակի բարձրացում;
c) պարենային անվտանգության և հողագործության, անասնապահության, անտառային տնտեսության և բազմանպատակային նշանակության համակարգերի կայուն զարգացման ապահովում;
d) բնական ռեսուրսների շահագործման կայուն մոդելների կիրառում, մասնավորապես, ջրհավաք ավազանների արդյունավետ օգտագործում;
e) բարձր լեռնային շրջաններում բնական ռեսուրսների շահագործման կայուն մոդելների կիրառում;
f) հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործում և պահպանում և ջրային ռեսուրսների յուրացում և արդյունավետ օգտագործում;
g) գործողությունների արտակարգ պլանների մշակում և կիրառում երաշտի հետևանքների մեղմացման նպատակով;
h) անապատացմանը և երաշտի ենթարկվող շրջաններում տվյալների հավաքի և գնահատման համակարգերի, ինչպես նաև մոնիտորինգի և վաղ նախազգուշացման համակարգերի կատարելագործում և/կամ ստեղծում, հաշվի առնելով կլիմատոլոգիական, մետեորոլոգիական, հիդրոլոգիական, կենսաբանական, հողագործական, տնտեսական և սոցիալական ասպեկտները;

i) էներգիայի տարբեր աղբյուրների զարգացում և արդյունավետ օգտագործում՝ ընդգրկելով էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման օժանդակությունը;

j) կենսաբանական բազմազանության պահպանություն և կայուն օգտագործում ՝ կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի դրույթներին համապատասխան;

k) անապատացման և երաշտի հետ կապված ժողովրդագրական ասպեկտների վերլուծություն;

l) Կոնվենցիայի կիրառումը ապահովող կառուցվածքային և իրավական շրջանակների ստեղծում կամ կատարելագործում և միջոցների ձեռք առնում, որոնք նախատեսում են, մասնավորապես, վարչական կառույցների և պարտականությունների ապակենտրոնացում ՝ կապված անապատացման ու երաշտի հիմնախնդիրների հետ ՝ վնասվող համայնքների և ամբողջությամբ հասարակության մասնակցությամբ:

Հոդված 5

ԳԻՏԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կոնվենցիայի, մասնավորապես նրա հոդվածներ 16 - 18-ի համաձայն և հոդված 7-ում նախատեսված համակարգման մեխանիզմի օգնությամբ, տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը անհատական կամ համատեղ.

a) օժանդակում են տեխնիկական համագործակցության ցանցերի և ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային տեղեկատվական համակարգերի ամրապնդմանը, ինչպես նաև համապատասխան դեպքերում նրանց ինտեգրացմանը տեղեկատվական համաշխարհային ցանցերի մեջ;

b) կազմում են գոյություն ունեցող տեխնոլոգիաների և նոու-հաու ցանկը և օժանդակում են նրանց տարածմանը և օգտագործմանը;

c) աջակցում են ավանդական տեխնոլոգիաների, գիտելիքների, նոու-հաու և մեթոդների օգտագործմանը Կոնվենցիայի հոդված 18-ի 2 բ) ենթակետին համապատասխան;

d) բացահատում են տեխնոլոգիաների փոխանցման կարիքները;

e) օժանդակում են համապատասխան գոյություն ունեցող և նոր էկոլոգիապես ընդունելի տեխնոլոգիաների մշակմանը, հարմարեցմանը, ներդրմանը և փոխանցմանը:

Հոդված 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Կոնվենցիայի, մասնավորապես նրա հոդվածներ 20 և 21-ի համաձայն, և հոդված 7-ում նախատեսված համակարգման մեխանիզմի հիման վրա, ինչպես նաև ազգային զարգացման իրենց քաղաքականության համապատասխան տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը անհատական կամ համատեղ.

a) ձեռնարկում են միջոցներ պետական և մասնավոր ներդրումների ձևով ֆինանսավորման մեխանիզմների արդյունավետացման և ամրապնդման ուղղությամբ՝ անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործում կոնկրետ արդյունքների հասնելու նպատակով;
b) որոշում են կարիքները միջազգային համագործակցության ուղղությամբ, ազգային ջանքերին աջակցելու համար;
c) օժանդակում են ֆինանսական համագործակցությանը երկկողմ և/կամ բազմակողմ հաստատությունների մասնակցությունը՝ Կոնվենցիայի իրականացման նպատակով:

Հոդված 7

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

1. Սույն հավելվածի դրույթները իրագործելու նպատակով տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը.

a) ստեղծում և/կամ ամրապնդում են անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման գործողությունների համակարգման ազգային կենտրոնները; և
b) ստեղծում են մեխանիզմներ ազգային կենտրոնների գործողության համակարգման ուղղությամբ՝ հետևյալ նպատակով.

i) տեղեկատվության և փորձի փոխանակման;

ii) գործողությունների համակարգման ենթատարածաշրջանային և տարածաշրջա-նային մակարդակով;

iii) օժանդակելու գիտա-տեխնիկական, տեխնոլոգիական և ֆինանսական համագործակցությանը;

iv) կարիքների որոշման՝ արտաքին կազմակերպությունների հետ համագործակցելիս; և

v) հաջորդող միջոցառումների անցկացման և գործողությունների ծրագրերի իրագործման գնահատման:

2. Տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը պարբերաբար անցկացնում են համակարգող խորհրդակցություններ, իսկ Մշտական քարտուղարությունը կարող է իրենց խնդրանքով Կոնվենցիայի հոդված 23-ին համապատասխան աջակցել այդպիսի համակարգող խորհրդակցությունների անցկացմանը հետևյալ ուղիով.

a) խորհրդատվություն տալով արդյունավետ համակարգում ապահովելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների կազմակերպման վերաբերյալ՝ ելնելով ուրիշ նման միջոցառումների անցկացման փորձից;

b) տեղեկատվություն տալով համապատասպան երկկողմ և բազմակողմ հաստատություններին, համակարգող խորհրդակցությունների վերաբերյալ և խրախուսելով դրանց ակտիվ մասնակցությունը; և

c) ուրիշ տեղեկատվություն տալով, որը կարող է օգտակար լինել համակարգման գործընթացի իրականացման և կատարելագործման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1

ՆՊԱՏԱԿԸ

Տվյալ հավելվածի նպատակն է Հյուսիսային Միջերկրածովյան տարածաշրջանի վնասվող երկրներում - Կոնվենցիայի Կողմերում տարածաշրջանի հատուկ պայմանների լույսի տակ ապահովել անհրաժեշտ կառավարող սկզբունքները և մեխանիզմները, Կոնվենցիայի արդյունավետ իրականացման համար:

Հոդված 2

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 1-ում հիշատակված Հյուսիսային Միջերկրածովի պայմանները իրենց մեջ ներառում են.

a) զգալի տարածքների վրա կիսաչոր կլիմայական պայմաններ, սեզոնային երաշտներ, թափվող տեղումների շատ մեծ փոփոխականություն և մեծ ուժգնության հանկարծակի տեղումներ;
b) աղքատ և զգալի չափով էրոզիայի ենթարկված հողեր, որոնց վրա հեշտությամբ առաջանում է մակերեսային կեղև;
c) անհարթ ռելիեֆ՝ թեք լանջերով և բազմազան լանդշաֆտներ;
d) անտառային ծածկոցի ոչնչացում մեծ տարածությունների վրա հաճախակի անտառային հրդեհներից;

e) ավանդական գյուղատնտեսության ճգնաժամ, որի հետևանքով հողերը դուրս են գալիս շրջանառությունից և հողապաշտպան ու ջրապաշտպան կառույցները աստիճանաբար քայքայվում են;

f) ջրային ռեսուրսների անարդյունավետ շահագործում, որը մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին՝ ընդգրկելով ջրակիր շերտերի աղքատացումը, քիմիական աղտոտումը և աղակալումը; և

g) տնտեսական ակտիվության կենտրոնացում ափամերձ շրջաններում ուրբանիզացիայի, արդյունաբերական գործունեության, տուրիզմի և ջրովի հողագործության ընդարձակման հետևանքով:

Հոդված 3

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ազգային գործողությունների ծրագրերը հանդիսանում են հեռանկարային պլանավորման համակարգի անբաժանելի և կենտրոնական մասերից մեկը վնասվող երկրների - Հյուսիսային Միջերկրածովյան տարածաշրջանի Կողմերի կայուն զարգացման համար:

2. Ճկուն պլանավորում ունեցող ռազմավարություն մշակելու համար, որը թույլ կտա հասնել տեղական բնակչության առավելագույն մասնակցությանը Կոնվենցիայի հոդված 10-ի 2 զ) ենթակետի համաձայն, անցկացվում է խորհրդատվության լայն գործընթաց բնակչության հետ, որին մասնակցում են իշխանության համապատասխան մակարդակի օրգանները, տեղական համայնքները և ոչ կառավարական կազմակերպությունները:

Հոդված 4

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վնասվող երկրները - Հյուսիսային Միջերկրածովյան տարածաշրջանի Կոնվենցիայի Կողմերը մշակում են ազգային գործողությունների ծրագրեր և համապատասխան դեպքերում

ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրեր: Այդպիսի ծրագրերի մշակումը ավարտվում է հնարավոր ամենակարճ ժամկետում:

Հոդված 5

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ազգային գործողությունների ծրագրերը մշակելիս և իրականացնելիս Կոնվենցիայի հոդվածներ 9 և 10-ին համապատասխան տարածաշրջանի ամեն մի վնասվող երկիր - Կոնվենցիայի Կողմ համապատասխան դեպքերում.

a) նշանակում է իր ծրագրի մշակման, համակարգման և իրականացման համար պատասխանատու համապատասխան օրգաններ;
b) ներգրավում է վնասվող բնակչությանը՝ ընդգրկելով տեղական համայնքներին ծրագրերի մշակմանը, համակարգմանը և իրականացմանը՝ խորհրդատվության գործընթացից սկսվող նախաձեռնությամբ, իշխանության տեղական օրգանների և համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցությամբ;
c) ուսումնասիրում է վնասվող շրջաններում շրջակա միջավայրի վիճակը՝ անապատացման պատճառների և հետևանքների որոշման, գործողությունների գերակայող ոլորտների բացահայտման նպատակով;
d) վնասվող համայնքների հետ գնահատում է անցյալ և ընթացիկ ծրագրերը՝ գործողությունների ծրագրերում ռազմավարության մշակման և միջոցառումների որոշման նպատակով;
e) մշակում է տեխնիկական և ֆինանսական ծրագրեր, հիմնված ա) - դ) ենթակետերում նշված գործողությունների արդյունքում ստացված տեղեկատվության վրա; և
f) մշակում և օգտագործում է արարողակարգեր և կողմնորոշիչներ՝ մոնիտորինգի և ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման համար:

Հոդված 6

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը իրենց գործողությունների ազգային ծրագրերում կարող են ընդգրկել հետևյալ բնույթի միջոցներ.

a) օրենսդրական, կառուցվածքային և վարչական միջոցներ;
b) միջոցներ հողօգտագործման սխեմաների, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, հողի էրոզիայի կանխման, անտառվերականգման, գյուղատնտեսական գործունեության և արոտավայրային տնտեսության վերաբերյալ;
c) վայրի բնության և կենսաբանական բազմազանության տարբեր այլ ձևերի արդյունավետ օգտագործման և պահպանության;
d) պահպանություն անտառային հրդեհներից;
e) գոյության միջոցների ստացման այլընտրանքային աղբյուրների քարոզչություն; և
f) ուսումնասիրություններ, կադրերի պատրաստում և հասարակության իրազեկության ապահովում:

Հոդված 7

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Կոնվենցիայի հոդված 11-ին համապատասխան տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը կարող են մշակել և իրականացնել ենթատարածաշրջանային և/կամ տարածաշրջանային գործողությունների ծրագրեր՝ կոչված գործողությունների ազգային ծրագրերը լրացնելու և նրանց արդյունավետությունը բարձրացնելու: Համանման ձևով տարածաշրջանի երկու կամ ավելի երկրներ - Կոնվենցիայի Կողմեր կարող են պայմանավորվել գործողությունների համատեղ ծրագրերի մշակման մասին:

2. Ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրերի մշակման նկատմամբ կիրառվում են հոդվածներ 5 և 6-ի mutatis mutandis դրույթը: Բացի այդ, այդպիսի ծրագրերը կարող են նախատեսել վնասվող շրջանների առանձին էկոհամակարգերի վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացում և մշակումների պատրաստում:

3. Ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կան համատեղ գործողությունների ծրագրեր մշակելիս տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը անհրաժեշտ ձևով.

a) ազգային հաստատությունների հետ համագործակցելով որոշում են ազգային նպատակները՝ կապված անապատացման հետ, որոնց առավել արդյունավետ կարելի է հասնել այդպիսի ծրագրերի օգնությամբ, ինչպես նաև գործունեության համապատասխան ձևերը, որոնք կարող են արդյունավետ իրագործվել այդ ծրագրի շրջանակներում;
b) գնահատում են համապատասխան տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և ազգային հիմնարկների գործարար հնարավորությունները և գործունեությունը;
c) գնահատում են տարածաշրջանի Կողմերի համատեղ իրականացվող անապատացման դեմ պայքարի գոյություն ունեցող ծրագրերը և նրանց կապը ազգային գործողությունների ծրագրերի հետ:

Հոդված 8

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագիր մշակող վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը կարող են հիմնադրել համակարգող կոմիտե, կազմված համապատասխան վնասվող Կողմերից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից, անապատացման դեմ պայքարի առաջադիմության զեկույցի, ազգային գործողությունների ծրագրերի համաձայնեցման, նախապատրաստման տարբեր փուլերում առաջարկություններ մտցնելու և ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրերի իրագործման համար, ինչպես նաև Կոնվենցիայի հոդվածներ 16 - 19 -ին համապատասխան տեխնիկական համագործակցության, խրախուսման և համակարգման ուղղությամբ կենտրոնի պարտականությունները կատարելու համար:

Հոդված 9

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և համատեղ գործողությունների ծրագրերը իրականացնելիս տվյալ տարածաշրջանի վնասվող զարգացած երկրները -

Կոնվենցիայի Կողմերը ներկա Կոնվեմցիայի համաձայն իրավունք չունեն ստանալու ֆինանսական օգնություն:

Հոդված 10

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄՅՈՒՍ ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Հյուսիսային Միջերկրածովյան տարածաշրջանի ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և համատեղ գործողությունների ծրագրերը կարող են մշակվել և իրագործվել՝ համակարգված մյուս ենթատարածաշրջանների կամ տարածաշրջանների, հատկապես Հյուսիսային Աֆրիկայի ենթատարածաշրջանի գործողությունների ծրագրերի հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1

ՆՊԱՏԱԿԸ

Տվյալ հավելվածի նպատակն է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի - Կոնվենցիայի Կողմերի վնասվող երկրներում, դրանց հատուկ պայմանների լույսի տակ, շարադրել անհրաժեշտ կառավարող սկզբունքները և մեխանիզմները Կոնվենցիայի արդյունավետ իրականացման համար:

Հոդված 2

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 1-ում հիշատակված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի հատուկ պայմանները, որոնք տարբեր չափով բնորոշ են տարածաշրջանի վնասվող երկրներին - Կոնվենցիայի Կողմերին, ընդգրկում են.

a) հատուկ խնդիրներ և նպատակներ ՝ կապված տնտեսական վերափոխումների ներկա գործընթացների հետ ՝ ընդգրկելով մակրոտնտեսական, ֆինանսական հիմնախնդիրներ տնտեսական ու շուկայական բարենորոգումների սոցիալ-քաղաքական բազայի ամրացման համար;

b) տարածաշրջանի տարբեր էկոհամակարգերում հողերի դեգրադացիայի բազմաթիվ ձևերի առկայությունը ՝ ընդգրկելով երաշտի հետևանքները և անապատացման ռիսկերը տարածաշրջաններում, ջրի և քամու միջոցով էրոզիայի ենթարկված հողերը;

c) գյուղատնտեսության ճգնաժամային վիճակը, որ պայմանավորված է , մասնավորապես, վարելահողերի ուժասպառությամբ, ոռոգման համակարգերի անհամարժեքությամբ և հողապաշտպան ու ջրապահպան սարքավորումների աստիճանական մաշվածության հետ կապված հիմնախնդիրներով;

d) ջրային ռեսուրսների անարդյունավետ շահագործման հիմնախնդիրը, որը առաջացնում է շրջակա միջավայրի լուրջ վնասում ՝ ընդգրկելով քիմիական աղտոտումը, աղակալումը և ջրակիր շերտերի աղքատացումը;

e) անտառների անհետացումը կլիմայական գործոնների, մթնոլորտի աղտոտման ազդեցության և հաճախակի անտառային հրդեհների հետևանքով;

f) վնասվող շրջաններում զարգացման անկայուն մոդելների կիրառումը, որոնք հանդիսանում են ֆիզիկական, կենսաբանական, քաղաքական , սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների բարդ փոխազդեցության արդյունք;

g) տնտեսական դժվարությունների սրացման վտանգը և սոցիալական պայմանների վատացումը այն շրջաններում, որոնք վնասվում են հողերի դեգրադացիայից, անապատացումից և երաշտից;

h) հետազոտական գործունեության և քաղաքական ու օրենսդրական բազայի նպատակների վերանայման անհրաժեշտությունը՝ բնական ռեսուրսների կայուն օգտագործման հետաքրքրությունների համար;

i) տարածաշրջանի ընդարձակումը դեպի ավելի լայն միջազգային համագործակցություն և կայուն զարգացման ոլորտում լայն նպատակների իրականացում:

Հոդված 3

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Ազգային գործողությունների ծրագրերը հանդիսանում են կայուն զարգացման համար ռազմավարությունների մշակման համակարգի անբաժանելի մասերից մեկը և պատշաճ ձևով ընդգրկում են հողերի դեգրադացիայի, անապատացման և երաշտի տարբեր ձևեր, որոնք վնասում են տարածաշրջանի երկրներին - Կոնվենցիայի Կողմերին:

2. Ճկուն պլանավորում ունեցող ռազմավարության մշակման համար, որը թույլ կտա Կոնվենցիայի հոդված 10-ի 2 զ) ենթակետի համաձայն հասնելու տեղական բնակչության առավելագույն մասնակցությանը, անցկացվում է խորհրդատվության լայն գործընթաց բնակչության հետ, որին մասնակցում են իշխանության համապատասխան մակարդակի օրգանները, տեղական համայնքները և ոչ կառավարական կազմակերպությունները: Համապատասխան դեպքերում հետաքրքրված վնասվող երկրի խնդրանքով այդ գործընթացին կարող են միանալ երկկողմ և բազմակողմ համագործակցության համակարգի հաստատությունները:

Հոդված 4

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ազգային գործողությունների ծրագրերը մշակելիս և իրականացնելիս Կոնվենցիայի հոդվածներ 9 և 10-ին համապատասխան տարածաշրջանի ամեն մի վնասվող երկիր - Կոնվենցիայի Կողմ համապատասխան դեպքերում.

a) նշանակում է իրենց ծրագրերի մշակման, համակարգման և իրականացման համար պատասխանատու համապատասխան օրգաններ;

b) ներգրավում է վնասվող բնակչությանը՝ ընդգրկելով տեղական համայնքներին, ծրագրերի պատրաստմանը, համակարգմանը և իրականացմանը՝ խորհրդատվության գործընթացից սկսվող նախաձեռնությամբ, իշխանության տեղական օրգանների և համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցությամբ;

c) ուսումնասիրում է վնասվող շրջաններում շրջակա միջավայրի վիճակը, անապատացման պատճառների և հետևանքների վերլուծության և գործունեության գերակայող ոլորտները որոշելու նպատակով;

d) վնասվող համայնքների մասնակցությամբ գնահատում է նախկին և ընթացիկ ծրագրերը, գործողությունների ծրագրի ռազմավարության մշակման և միջոցառումների որոշման նպատակով;

e) մշակում է տեխնիկական և ֆինանսական ծրագրեր, հիմնված տեղեկատվության վրա՝ ստացված ա) - դ) ենթակետերում նշված գործունեության արդյունքում; և

f) մշակում և օգտագործում է արարողակարգեր և ստուգիչ ցուցանիշներ մոնիտորինգի և ծրագրի իրականացման ընթացքի գնահատման համար:

Հոդված 5

ԵՆԹԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Կոնվենցիայի հոդվածներ 11 և 12-ին համապատասխան, տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը կարող են մշակել և իրականացնել ենթատարածաշրջանային և/կամ տարածաշրջանային գործողությունների ծրագրեր՝ կոչված լրացնելու գործողությունների ազգային ծրագրերը և մեծացնելու նրանց էֆեկտիվությունը և արդյունավետությունը: Նման ձևով տարածաշրջանի երկու կամ ավելի երկրներ - Կոնվենցիայի Կողմեր կարող են պայմանավորվել համատեղ գործողությունների ծրագրի մշակման մասին:

2. Այդպիսի ծրագրերը կարող են մշակվել և իրականացվել համագործակցելով Կոնվենցիայի մյուս Կողմերի կամ տարածաշարջանների հետ: Այդպիսի համագործակցության

նպատակն է ստեղծել բարենպաստ միջազգային իրադրություն և նպաստել ֆինանսական և/կամ տեխնիկական օգնության կամ այլ աջակցության՝ անապատացման և երաշտի հիմնախնդիրը տարբեր մակարդակներով ավելի արդյունավետ լուծելու նպատակով:

3. Հոդվածներ 3 և 4-ի դրույթները օգտագործում են mutatis mutandis սկզբունքով՝ ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և համատեղ գործողությունների ծրագրերը մշակելիս և իրականացնելիս: Բացի այդ, այդպիսի ծրագրերը կարող են նախատեսել վնասվող շրջանների առանձին էկոհամակարգերին վերաբերվող ուսումնասիրությունների և մշակումների անցկացում:

4. Ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և համատեղ գործողությունների ծրագրեր մշակելիս և իրականացնելիս տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը պատշաճ ձևով.

a) որոշում են ազգային հաստատությունների հետ համագործակցելով անապատացման դեմ պայքարի ոլորտում համազգային խնդիրները, որոնք կարող են լավագույնս լուծվել այդպիսի ծրագրերի օգնությամբ, ինչպես նաև համապատասխան միջոցառումները, որոնք կարող են արդյունավետ իրականացվել այդպիսի ծրագրերի շրջանակներում;
b) գնահատում են տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և ազգային համապատասխան հաստատությունների գործարար հնարավորությունները և գործունեությունը;
c) վերլուծում են անապատացման դեմ պայքարի գոյություն ունեցող ծրագրերը, որոնք իրականացվում են տարածաշրջանի երկրների - Կոնվենցիայի Կողմերի հետ համատեղ, և նրանց կապը ազգային գործողությունների ծրագրերի հետ; և
d) քննարկում են ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և համատեղ գործողությունների ծրագրերի շրջանակներում գործունեության համակարգման միջոցները՝ ընդգրկելով հաստատված կարգով յուրաքանչյուր համապատասխան վնասվող երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ համակարգող կոմիտեների ստեղծումը, անապատացման դեմ պայքարի առաջընթացի ամփոփման, ազգային գործողությունների ծրագրերի համաձայնեցման, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կամ համատեղ գործողությունների ծրագրերի նախապատրաստման տարբեր փուլերում հանձնարարություններ մտցնելու համար, ինչպես նաև Կոնվենցիայի հոդվածներ 16 և 19-ին համապատասխան խրախուսելու և

տեխնիկական համագործակցության համակարգման ուղղությամբ որպես կենտրոնների պարտականություններ կատարելու համար:

Հոդված 6

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կոնվենցիայի նպատակների և սկզբունքների համապատասխան տարածաշրջանի երկրները - Կոնվենցիայի Կողմերը անհատական կամ համատեղ.

a) օժանդակում են ամրացնելու գիտա - տեխնիկական համագործակցության ցանցերը, մոնիտորինգի ստուգիչ ցուցանիշների համակարգի և բոլոր մակարդակներով տեղեկատվական համակարգի ցանցը, ինչպես նաև պատշաճ ձևով դրանց ինտեգրացնելու համաշխարհային տեղեկատվական համակարգերի մեջ; և
b) օժանդակում են համապատասխան գոյություն ունեցող և նոր, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների մշակմանը, հարմարեցմանը և փոխանցմանը տարածաշրջանի սահմաններում և դրանից դուրս:

Հոդված 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Տարածաշրջանի վնասվող երկրները - Կոնվենցիայի Կողմերը Կոնվենցիայի նպատակներին և սկզբունքներին համապատասխան անհատական կամ համատեղ.

a) ձեռք են առնում միջոցներ պետական և մասնավոր ներդրումների ձևով ֆինանսավորման մեխանիզմների արդյունավետացման և ամրացման ուղղությամբ՝ հողերի դեգրադացիայի և անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմացման գործում կոնկրետ արդյունքների հասնելու նպատակով;
b) որոշում են միջազգային համագործակցության պահանջները ազգային ջանքերին օժանդակելու համար՝ ստեղծելով մասնավորապես բարենպաստ իրադրություն ներդրումների և ակտիվ ներդրական ռազմավարության խրախուսման և համալիր մոտեցումների կիրառման համար անապատացման դեմ արդյունավետ պայքարի գործում՝ ընդգրկելով այդպիսի գործընթացներով առաջացած հիմնախնդիրների վաղ բացահայտումը;

c) հասնում են ֆինանսական համագործակցության հարցերով զբաղվող երկկողմ և/կամ բազմակողմ ընկերակցությունների և հաստատությունների մասնակցությանը՝ Կոնվենցիայի իրականացումը ապահովելու նպատակով՝ ընդգրկելով տարածաշրջանի վնասվող երկրների - Կոնվենցիայի Կողմերի հատուկ կարիքները հաշվի առնող ծրագրային միջոցառումները; և

d) գնահատում են հոդված 2-ի ա) կետի դրույթների հնարավոր ազդեցությունը Կոնվենցիայի 6, 13, 20 և մյուս համապատասխան դրույթների իրականացման վրա:

Հոդված 8

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

1. Տվյալ հավելվածի իրականացման նպատակով տարածաշրջանի երկրները - Կոնվենցիայի Կողմերը.

a) ստեղծում և/կամ ամրացնում են անապատացման դեմ պայքարի և/կամ երաշտի հետևանքների մեղմացման ուղղությամբ գործողությունների համակարգման ազգային կենտրոնները; և

b) պատշաճ ձևով քննարկում են տարածաշրջանային համագործակցության ամրացման նպատակով մեխանիզմների ստեղծման հնարավորությունը:

2. Մշտական քարտուղարությունը կարող է տարածաշրջանի երկրների - Կոնվենցիայի Կողմերի խնդրանքով և Կոնվենցիայի հոդված 23-ին համապատասխան օժանդակել տարածաշրջանում համակարգող խորհրդակցությունների հրավիրմանը հետևյալ ձևով.

a) տեղեկատվական ծառայությունների մատուցմամբ արդյունավետ համակարգող մեխանիզմների ստեղծման ոլորտում՝ հաշվի առնելով այլ նման մեխանիզմների գործունության փորձը; և

b) այլ տեղեկատվության տրամադրմամբ, որը կարող է ունենալ նշանակություն համակարգման գործընթացի ձևավորման կամ կատարելագործման ժամանակ: